Azg Ազգ

28 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2010 ՀԻՆԳՇԱԲԹԻ 197 (4577)

ISSN: 1829-1651

ԼՂՀ ճանաչման օրինագծի ճակատագիրը կորոշվի այսօր

Երեկ Ազգային ժողովի նախագահ Հովիկ Աբրահամյանը հանդիպեց խորհրդարանական խմբակցությունների ղեկավարների հետ՝ խորհրդակցելու «Ժառանգության»՝ ԼՂՀ ճանաչման օրինագծի շուրջ, ինչի որ այդ օրինագիծն ըստ ԱԺ կանոնակարգ-օրենքի այս ֆառօրյայում պետք է դրվի քվեարկության: Փաստորեն՝ «Ժառանգությունը» փորձում է մեծամասնությանը համոզել, որ նա քվեարկի օրինագծի օգտին, իսկ մեծամասնությունը, հակառակը, ուզում է համոզել «Ժառանգությանը», որ վերջինս քարը փեշից թափի ու առայժմ համաձայնի քվեարկությամբ հետաձգել օրինագծի քվեարկությունը: Եթե մինչեւ այսօրվա ժամը 12-ը փոխհամաձայնություն չկայանա, օրինագիծը պետք է դրվի քվեարկության:

Մ. Խ.

Սարգսյանն ու Ալիեւը պայմանավորվե՞լ են

ՀՈՎԻԿ ԱԲՅԱՆ

Հայ-ռուս-ադրբեջանական ամենաբարձր մակարդակի հերթական՝ այս տարի երրորդ հանդիպման վայրը՝ Կասպից ծովի ափամերձ Աստրախան քաղաքը, թերեւս պատահականորեն չէր ընտրվել: Երեկ Ռուսաստանի, Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպումից ժամեր առաջ ռուսական այդ քաղաքում բացվեց Հեյդար Ալիեւի՝ ավելի քան 7-մետրանոց բրոնզե արձանը: Հետաքրքրական է պարզել, թե Աստրախանը աշխարհի որերորդ քաղաքը դարձավ՝ «ադրբեջանցիների հայր» Ալիեւի ավագի արձանով:

Բացման արարողության ժամանակ Իլհամ Ալիեւը ջերմ խոսքեր է ասել Ռուսաստանի, ռուս-ադրբեջանական դարավոր բարեկամության վերաբերյալ, նույնիսկ նոր տեղադրված արձանը համարում երկու ժողովուրդների դարավոր բարեկամության խորհրդանիշ, չնայած Աստրախանում Հեյդար Ալիեւի արձանի տեղադրման գործում ռուսական պետությունը ֆինանսապես չի մասնակցել. բոլոր ծախսերը հոգացել է Ադրբեջանը:

Երբ ադրբեջանական պատվիրակությունը մասնակցում էր «ռուս-ադրբեջանական դարավոր բարեկամության խորհրդանիշի» բացմանը, հայկականը՝ նախագահ Սերժ Սարգսյանի գլխավորությամբ, այցելեց հայ-ռուսական հիրավի դարավոր բարեկամության խորհրդանիշներից մեկը՝ Աստրախանի «Հայաստան» այգի, որը, ինչպես եւ այգում տեղադրված խաչքարը, 2008-ին տեղի հայ համայնքի նվերն է քաղաքի հիմնադրման 450-ամյակին:

Տես էջ 2

ՄԱՄՈՒԼԻ 17-ՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

Թեհրանում հայկական պատվիրակությունը վերջնաժամկետ է ներկայացրել իրանական կողմին

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Թեհրան

Թեհրանի մեծ Մոսալայում՝ մամուլի եւ լրատվական գործակալությունների 17-րդ միջազգային ցուցահանդեսի շրջանակներում, հայկական տաղավարից անդադար հնչում է հայկական երաժշտություն, ցուցադրվում են Հայաստանի տեսարժան վայրերը, գրքեր ոչ միայն հայերենով, այլեւ անգլերենով եւ պարսկերենով, թերթեր, բազմաթիվ դրոշներ ու ցուցապաստառներ: Հայկական տաղավարում մարդկանց հոսքը չի դադարում: Այցելուներին հետաքրքրում է գրեթե ամեն ինչ Հայաստանի մասին՝ եկեղեցիների ու քաղաքների ճարտարապետությունը, Հայոց ցեղասպանությունը, անկախության հռչակումը, ղարաբաղյան հակամարտություն, տնտեսություն, մշակույթն ու հայ-իրանական հարաբերությունները:

Ցուցահանդեսի բացման արարողության ժամանակ հայկական տաղավարի դեմ ադրբեջանական պատվիրակության գործած խուլիգանական արարքի պատճառով մեծացավ հետաքրքրությունը ոչ միայն հայկական տաղավարի, այլեւ «Տատն ու պապը» հուշարձանը պատկերող մեծ լուսանկարի նկատմամբ: Բազմաթիվ այցելուներ ուղղակի մոտենում են տաղավարին՝ լուսանկարվելու համար:

Արդեն երկրորդ օրն է՝ իրանական կողմը ադրբեջանական պատվիրակության պահանջով հայկական տաղավարի պատից հանել է լուսանկարը, ինչը առաջացրել է հայկական պատվիրակության դժգոհությունը, որը ամենատարբեր մակարդակներով բարձաձայնել է խնդրի մասին եւ պահանջել ոչ միայն ադրբեջանական կողմից ներողություն կատարվածի համար՝ այլեւ լուսանկարը կրկին տեղադրել տաղավարի պատին: Հիշեցնենք, որ հոկտեմբերի 25-ին, ցուցահանդեսի բացման ժամանակ, ադրբեջանական եւ թուրքական պատվիրակությունները՝ իրանական կողմի անմիջական ներկայությամբ, հսկայական աղմուկ բարձրացրին հայկական տաղավարում, իսկ ադրբեջանցի լրագրողներից մեկը, որ ավելի շատ հոգեկան խնդիրներ ունեցողի տպավորություն էր թողնում, հայհոյանքներով եւ սպառնալիքներով մտավ հայկական տաղավար եւ պոկեց պատին ամրացված Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի հանրապետությունների քարտեզները:

Հայկական տաղավարն իր ցուցանակներով: «Տատիկ-պապիկ» պոկված նկարը՝ ներքեւում:

Տես էջ 8

Բայդենն ասե՞լ է, թե՞ չի ասել. Հայաստանի նախագահի գրասենյակից հերքում են

Երեկ առավոտից youtube.com կայքում տեղադրվել էր մի տեսագրություն, որտեղ ներքեւի պլանից կարծես թե թաքնված տեսախցիկով նկարահանված էր ԱՄՆ փոխնախագահ Ջո Բայդենը, որ խոսում է ենթադրաբար հայ համայնքի ներկայացուցիչ ակնոցավոր մի երիտասարդի հետ: Ճիշտն ասած, Բայդենի ձայնը վատ է լսվում՝ զուգահեռ խոսակցություն կա, որ խանգարում է լսել կարեւոր հատվածները, ինչ-որ պահ հստակ լսվում են «Հայաստանի նախագահ» բառերը: Բնօրինակը լիակատար վերականգնելու մեր ապարդյուն փորձերից հետո օգտվեցինք կայքերում տեղադրված թարգմանության սղագրությունից, որի իսկության մասին ոչինչ ասել չենք կարող: Ըստ այդ սղագրության՝ հայ համայնքի ներկայացուցիչ երիտասարդը Ջո Բայդենին ասում է, թե իրենք (հայ համայնքը՝ ենթադրաբար) շատ մտահոգ են, եւ ուզում է իմանալ՝ ո՞րն է այն մեսիջը, որ կարող է փոխանցել հայկական համայնքին: Այս խոսակցությունը տեղի է ունենում ապրիլի 24-ից առաջ: Պատասխանն, ըստ այդ սղագրության, այսպիսին է. «Ինչ որ պետք է փոխանցեք ձեր համայնքին, այն է, որ մենք չենք աջակցում: Թուրքերը պետք է գան գիտակցության, թե ո՞րն է իրականությունը: Եվ այն, ինչ պետք է մենք անենք, այն է, դուք գիտեք, այս, շարունակվող կոմպրոմիսը, որի վրա աշխատում ենք միաժամանակ... Ասեք նրանց, որ Հայաստանի նախագահն էր, որ զանգահարեց ինձ եւ ասաց. «Տեսեք, մի բարձրացրեք այս հարցը հիմա, երբ մենք բանակցություններ մեջ ենք»: Անցանք առաջ: Հիմա դա անցյալ է: Ամեն դեպքում իրականությունը մի օր երեւան կգա»:

Այս խոսակցությունը մի փոքր անորոշ է, եւ պետք է ենթադրություններ անել, թե խոսքը հատկապես ինչին է վերաբերում:

Հետեւեցին բազմապիսի վերլուծականներ առ այն, որ Հայաստանի նախագահը փաստորեն այսպիսով խոչընդոտել է «Ցեղասպանություն» բառը ապրիլի 24-ին Օբամայի արտասանելուն, որ այս տեսագրությունը հաստատ Աստրախանի Մեդվեդեւ-Սարգսյան-Ալիեւ հանդիպումից եւ դեկտեմբերի 1-2-ին Աստանայում կայանալիք ԵԱՀԿ գագաթաժողովից առաջ ամերիկյան շրջանակներից է դրվել շրջանառության մեջ՝ խանգարելու ԼՂ կարգավորման հարցում ռուսական նախաձեռնություններին տրվելուց եւ հիշեցնելու ԱՄՆ-ի մասին, անգամ այդ տեսանյութը «հսկիչ կրակոց» անվանողներ եղան, հիշեցին ԱՄՆ-ում ձերբակալված հանցագործ խմբին եւ այլն: Ո՞վ եւ ինչո՞ւ է այս տեսանյութը տեղադրել youtube.com կայքում՝ սա իսկապես պարզելու բան է. պարզ հերքումներից բացի՝ հարկավոր կլինեն համոզիչ փաստարկներով ամրացված բացատրություններ՝ ընդհուպ Ջո Բայդենի եւ հայ համայնքի տվյալ ներկայացուցչի կողմից:

Տես էջ 8

Ասանայում կհամաձայնեցվե՞ն «հիմնարար սկզբունքները»

«Հարցեր դեռ շատ կան, բայց կողմերի մեջ կա ցանկություն: Եթե առաջիկա ամսում կողմերը լավ աշխատեն, հնարավոր է դեկտեմբերի 1-2-ը Աստանայում կայանալիք ԵԱՀԿ գագաթաժողովի ժամանակ հասնել հիմնարար սկզբունքների համաձայնեցմանը», ըստ Panorama.am-ի՝ նշել է ՌԴ նախագահ Մեդվեդեւը Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հետ Աստրախանում ունեցած հանդիպումից հետո: «Բայց, կրկնում եմ, հիմնական աշխատանքները դեռ առջեւում են», ընդգծել է Մեդվեդեւը: ՌԴ նախագահը նաեւ ասել է, որ ԱԳ նախարարներին հանձնարարվել է շարունակել աշխատանքները՝ սկզբունքները համաձայնեցնելու ուղղությամբ:

Հ. Ա.

Անցում ձմեռային ժամանակի

Հայաստանի Հանրապետության տարածքում 2010 թ. հոկտեմբերի վերջին կիրակի օրը՝ 31-ին, ժ. 3-ին ժամացույցի սլաքները պետք է տանել 1 ժամ հետ:

Եթե Ազգային հետախուզական կազմակերպությունը՝ MIT-ն է սպառնացել Հրանտ Դինքին, ապա սպանության գործը չի բացահայտվի երբեք

Հ. ՉԱՔԲՅԱՆ

«Ակօս»-ի գլխավոր խմբագիր Հրանտ Դինքը սպանվեց 2007-ի հունվարի 19-ին: Ջհաբված մարդասպան Օգյուն Սամասթին, սպանության գործով ձերբակալվեցին 17 մեղադրյալներ, որոնք բոլորն էլ կալանվել էին: Շուտով կլրանա սպանության 4-րդ տարելիցը, եւ որեւէ հիմք չկա ենթադրելու, որ դա կբացահայտվի:

Ինչո՞ւ: Այն պարզ պատճառով, որ դատախազությունը փոխանակ խորացնելու գործի հետաքննությունը՝ հայտնաբերելու համար սպանության բուն կազմակերպիչներին, կալանքից է ազատում ձերբակալվածներին: Այսպիսով, կալանքը որպես խափանման միջոց ներկայումս կիրառվում է 17 մեղադրյալներից Էրհան Թունջելի եւ 3ասին Հայալի նկատմամբ միայն: Ինչ վերաբերում է Սամասթին, ապա նրա գործն էլ հանձնվում է անչափահասների գործերի քննության դատարան այն պատճառաբանությամբ, թե սպանությունը կատարելու պահին նա դեռ 18 տարեկան չի եղել: Այսինքն՝ միանգամայն հնարավոր է Սամասթ կոչված մարդասպանի ազատումը Դինքի սպանության 5-րդ տարելիցին:

Սամասթի հետ հավանաբար ազատ կարձակվեն նաեւ Թունջելն ու Հայալը: Այսպիսով, առանց բացահայտման կկարձվի Դինքի սպանության գործը: Սամասթի գործի հանձնումը անչափահասների դատարան հայտնի է դարձել հոկտեմբերի 26-ին դատական 15-րդ նիստում, որտեղ էլ, ինչպես նույն օրվա համարում նշել է «Թարաֆ» թերթը, ընթերցվել է Ազգային հետախուզական կազմակերպության՝ MIT-ի պաշտոնական գրությունը:

Ինչպես հայտնի է, սպանությունից շուրջ երեք տարի առաջ՝ 2004-ի փետրվարի 24-ին Հրանտ Դինքը հրավիրվել էր Ստամբուլի նահանգապետարան: Այնտեղ նրան 2 հոգու ներկայությամբ ընդունել էր Ստամբուլի փոխնահանգապետ Էրգյուն Գյունգորը: Նա, նկատի ունենալով Քեմալ Աթաթուրքի հոգեդուստր Սաբիհա Գյոքչենի հայկական ծագման մասին հրապարակումները, ասել է. «Պարոն Հրանտ, Դուք փորձառու լրագրող եք, մի՞թե ավելի զգուշավոր լինելու անհրաժեշտություն չեք զգում: Հետո, ի՞նչ կարիք կա այսպիսի հրապարակումներ: Ինքներդ տեսաք, թե դրանց պատճառով ինչպես ալեկոծվեց հասարակությունը: Մենք Ձեզ ճանաչում ենք: Բայց ի՞նչ իմանա անծանոթը փողոցում: Նա կարող է մտածել, որ Դուք այդ ամենի մասին գրում եք այլ նպատակով: Մի՞թե հարկ չկա ավելի զգուշավոր լինելու»:

Տես էջ 8

Ռուսաստանի հայերի միության 10-ամյակին նվիրված «Армения и мир» ամսագրի հատուկ թողարկումը

Ռուսաստանում հայերի կյանքին եւ այդ համատեքստում կարեւորություն ունեցող այլ իրադարձությունների է անդրադառնում ՌԴ-ում տպագրվող «Армения и мир» ամսագրի հատուկ թողարկումը: Նախ նշենք, որ համարը նվիրված է Ռուսաստանի հայերի միություն համառուսաստանյան հասարակական կազմակերպության տասնամյակին: Այս հոբելյանին նվիրված միջոցառումների ներկայացմանը զուգահեռ ամսագրի հատուկ համարում հրապարակվել են նաեւ նյութեր Արմեն Ջիգարխանյանի, Գարեգին Նժդեհի մասին:

«Որքանո՞վ է հայ մշակույթին եւ հայերին հատուկ հոռետեսությունը կամ լավատեսությունը», այսպիսի հարցով է ամսագիրն ընթերցողներին ներկայացնում գլխավոր խմբագիր **Լուսիկ Ղուկասյանը**: Հարցադրումը ամեն անգամ խմբագրական գրելիս անհանգստացնում է Ղուկասյանին, թեեւ պատասխանը ամերիկացի հոգեբան Ջուլիա Նորեմի հետազոտության արդյունքն է, որի համաձայն «պաշտպանական հոռետեսությունը ռազմավարական լավատեսությունից վատ չի աշխատում եւ բնավ էլ միշտ չէ, որ պետք է լինել լավատես»:

Ամսագրում ներկայացվում են Ռուսաստանի հայերի միության անցած ուղին եւ տասնամյա հոբելյանի շրջանակներում անցկացված միջոցառումները, որոնց ֆոնին էլ ընթերցողը կարող է ծանոթանալ կազմակերպության նախագահ Արա Աբրահամյանի հետ հարցազրույցին, թե ինչպես կարելի է լինել երջանիկ: Աբրահամյանը ներկայանում է որպես հաջողակ, ուրախ եւ լավատես մարդ: Ամսագրում կարելի է ծանոթանալ ոչ միայն Ռուսաստանի հայերի միության, Համաշխարհային հայկական կոնգրեսի նախագահ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի բարի կամքի դեսպան Արա Աբրահամյանի կենսագրությանն ու անցած ուղուն, այլեւ այն կազմակերպությունների ճակատագրին, որոնց ստեղծման հարցում իր մեծ ներդրումն է ունեցել Աբրահամյանը:

Ամսագրի էջերում կարելի է գտնել նաեւ հրապարակում Երկրորդ համաշխարհային պատերազմում իրենց հերոսությամբ աչքի ընկած հայազգի զորավարների՝ մարշալներ Բաղրամյանի եւ Բաբաջանյանի, Խուդյակովի եւ Աղանովի, ծովակալ Իսակովի մասին:

«Մշակույթ» խորագրի ներքո Արմեն Ջիգարխանյանի 75-ամյակին նվիրված հրապարակումն է՝ Ռուսաստանի առաջին ալիքով նրա հարցազրույցից հատվածներով: Դրան հաջորդող «Դեմքեր» խորագիրը ներկայացնում է Գարեգին Նժդեհին՝ նրա մտքերով, գաղափարախոսությամբ, գործած արարքներով եւ ապագայի տեսլականով: Իսկ Թուրքիայի հավատափոխ հայերի խնդիրներին անդրադարձը, որ ներկայացված է «Սփյուռք» խորագրով, անդրադառնում է այդ մարդկանց համար էթնիկ ծագմանն առնչվող խնդիրներին:

Պարբերականի թեմաներից վերջին ակորդը TV ARM RU հեռուստալիքի հեռարձակման մեկնարկին է վերաբերում՝ ներկայացնելով հարցազրույց հեռուստաընկերության հիմնադիր Տաթեւիկ Աղամիրյանի հետ: Ռուսաստանում առաջին էթնիկ ռուսալեզու այս հեռուստալիքի գործունեության նպատակը Ռուսաստանի, Հայաստանի, Ամերիկայի ու Եվրոպայի տարածքում ապրող հայերի կյանքի լուսաբանումն է, ներկայացումն այնպես, ինչպես կա:

Ա. Հ.

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Պատգամավորները հարգեցին հոկտեմբերի 27-ի զոհերի հիշատակը

Երեկ՝ 1999 թվականի հոկտեմբերի 27-ի ողբերգության 11-րդ տարելիցի օրը, Ազգային ժողովի պատգամավորները նիստից առաջ այցելեցին խորհրդարանական այգի, զոհերի հիշատակին դրված հուշարձան՝ հարգելով զոհված պետական այրերի հիշատակը: Ազգային ժողովի նախագահ Հովիկ Աբրահամյանը, Վազգեն Սարգսյանի մայրն ու եղբայրը՝ տիկին Գրետան եւ Արմեն Սարգսյանը, Ռիմա Դեմիրճյանը, ԱԺ

խմբակցությունների պատգամավորները ծաղիկներ դրեցին անցած տարի հուշաքարի փոխարեն դրված հուշարձանին: Իսկ արդեն դահլիճում, որտեղ ներկա էին նաեւ զոհվածների հարազատները, պատգամավորները մեկ րոպե լռությամբ հարգեցին ոճրագործության զոհերի հիշատակը, ԱԺ նախագահը տարելիցի առթիվ խոսք ասաց. «Այսօր լրանում է 1999 թ. հոկտեմբերյան ֆսմնելի ոճրագործության 11-րդ տարեդարձը, ոճրագործություն, որ առաջին հերթին ոնձգություն էր ոչ միայն պետական քաղաքական ականավոր գործիչների կյանքի նկատմամբ, այլեւ հարված էր պետականության ողնաշարին: Ողբերգական իրադարձությունների հետեւանքով կորցրեցինք պետության ու ժողովրդի նվիրյալ զավակների, ովքեր իրենց ապրած կյանքով ու գործունեությամբ ազնվորեն ծառայեցին հասարակությանը, ովքեր ունեին բազում ծրագրեր եւ դրանք իրականացնելու հաստատակամություն»:

Մ. Խ.

Հանձնաժողովը կխնարկի Վանաձոր-Ֆիոլետովո երկաթուղու կառուցման խնդիրները

Ինչպես տեղեկացանք տրանսպորտի եւ կապի նախարարության մամուլի ծառայությունից, Վանաձոր-Ֆիոլետովո երկաթուղու կառուցման հետ կապված բնապահպանական, քաղաքաշինական, էներգետիկ, երկրաբանական եւ այլ խնդիրներն ուսումնասիրելու նպատակով տրանսպորտի եւ կապի նախարար Մանուկ Վարդանյանի հրամանով ստեղծվել է միջգերատեսչական հանձնաժողով: Հանձնաժողովում ընդգրկվել են տրանսպորտի եւ կապի, տարածքային կառավարման, քաղաքաշինության, էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարությունների, անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, «Տրանսնախագիծ» ինստիտուտի, «Հարավկովկասյան երկաթուղիներ» ընկերության ներկայացուցիչներ: Մինչեւ դեկտեմբերի 1-ը հանձնաժողովը պետք է ավարտի ուսումնասիրման աշխատանքները եւ արդյունքների մասին եզրակացությունը ներկայացնի նախարարին:

Տրանսպորտի եւ կապի նախարարությունից տեղեկացանք նաեւ, որ նախարարությունում նոյեմբերի 1-ին, ժամը 11.30-ին կբացվեն հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի մաս կազմող Երեւան-Աշտարակ 11,71 կմ երկարությամբ գոյություն ունեցող ճանապարհային հատվածի վերակառուցման համար հայտ ներկայացրած շինարարական կազմակերպությունների մրցութային փաթեթները:

Ա. Մ.

Սարգսյանն ու Ալիեւը պայմանավորվե՞լ են

Ծաղիկներ՝ հայկական հուշարձանին:

Զրույց՝ հայ համայնքի հետ:

1-ին էջից

Հայաստանի նախագահը ծաղկեզամբյուղ է դրել խաչքարի առջեւ եւ նշել, որ այն «խորհրդանիշն է հայ-ռուսական դարավոր բարեկամության»: Սերժ Սարգսյանի այս մտքին համաձայնել են հայկական պատվիրակությանն ուղեկցող Ասրախանի նախանգաղեռ Ալեքսանդր Ժիլկինը, տեղի հայկական Սուրբ Հռիփսիմե եկեղեցու հոգեւոր հովիվ Սեբեոս քահանա Ղալաչյանը, հայ համայնքի ներկայացուցիչները: Հատկանշական է, որ խաչքար-կոթողի երկրորդ կամարը նվիրված է Ասրախանում հայկական առաջին քարե եկեղեցու հիմնադրման 300-ամյակին, իսկ երրորդ կամարը՝ քաղաքում Հայ առաքելական եկեղեցու թեմի հիմնադրման 290-ամյակին: Նշենք, որ դեռեւս 1717-ին կայսրուհի Եկատերինայի հրամանագրով Ասրախանը դարձավ Ռուսաստանում Հայ առաքելական եկեղեցու թեմի առաջնորդի առաջին նստավայրը: Իսկ ռուսական պատմագիտական աղբյուրները նշում են. «Կասպից ծովի այս հատվածում 10-11-րդ դարերում բնակություն հաստատած հայերը 17-րդ դարի 60-ականներին իրենց թվաքանակով նույնիսկ ավելի էին ռուսներից»:

Երեք նախագահների հանդիպումը՝ առանց պատվիրակության անդամների, մեկնարկեց Երեւանի ժամանակով ժամը 16-ին: Նախ նշենք, որ ինչպես հայաստանյան ու ղարաբաղյան, այնպես էլ ադրբեջանական փորձագիտական շրջանակները որեւէ լուրջ տեղաշարժ չէին ակնկալում ասրախանյան հանդիպումից: Միակ նկատելին նշվում էր այն, որ նախագահների մակարդակով հանդիպումները փաստորեն շարունակվում են, ինչն, անշուշտ, ինքնին դրական է: Նշենք նաեւ, որ եթե նախորդ՝ պետերբուրգյան նմանատիպ հանդիպման անմիջապես հաջորդ օրը ադրբեջանական կողմը կազմակերպեց Ջայլուի միջադեպը՝ մարդկային զոհերով, ապա ասրախանյան հանդիպման նախորդ օրը Ադրբեջանը եւս մեկ անգամ միջադեպ սարքեց, այս անգամ Մարտակերտի շրջանում. զոհվեց ստեփանակերտցի ժամկետային զինծառայող, 20-ամյա Հարութ Գրիգորյանը:

Սարգսյան-Մեդվեդեւ-Ալիեւ համատեղ հայտարարություն

Հանդիպումից հետո երեք նախագահները հանդես են եկել համատեղ հայտարարությամբ՝ «Վստահության ամրապնդման վերաբերյալ հատուկ արձանագրություն» խորագրով, որտեղ, ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալության, ասված է. «Հաշվի առնելով 2008-ին Մոսկվայում հռչակված համատեղ արձանագրությունները՝ նախագահներն ընդգծել են, որ հակամարտության լուծումը՝ քաղաքական-դիվանագիտական միջոցներով, պահանջում է հետագա ջանքեր, այդ թվում՝ հրադադարի ռեժիմի ամրապնդում եւ ռազմական ոլորտում փոխվստահություն: Այս նպատակով Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահները պայմանավորվել են՝ որպես այս ամենին ուղղված առաջին քայլ, իրականացնել ռազմագերիների եւ զոհվածների դիակների փոխանակում՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի եւ Միջազգային կարմիր խաչի միջնորդությամբ: Պայմանավորվել են նաեւ հետագայում եւս նման հարցերին լուծում տալ բացառապես մարդասիրական տեսանկյունով», հայտարարությունը լրագրողներին է ներկայացրել ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւը՝ ընդգծելով, որ «եռակողմ հանդիպումը շատ օգտակար էր», եւ «սրանք ոչ թե բանակցություններ են, այլ առաջ ընթանալու հնարավորություն»:

Հ. Գ. Չնայած ասրախանյան հանդիպումից առաջ ադրբեջանական կողմն արդեն իսկ խախտել է հրադադարի ռեժիմը, այնուամենայնիվ, սահմանում զգոնությունն այս օրերին խիստ կարեւոր է, քանի որ Ադրբեջանը նման հանդիպումներից հետո սովորաբար դիմում է սադրանքների:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետության 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Digitec Expo 2010 կտարբերվի նախկիններից

Հավաստիացնում են ցուցահանդեսի կազմակերպիչները

Հոկտեմբերի 29-31-ը տեղի ունենալիք Digitec Expo 2010 միջազգային տեխնոլոգիական ցուցահանդեսի բացման կապակցությամբ երեկ «Նովոսի» գործակալությունում մամուլի ասուլիսի էին հրավիրել Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության (ԻՏՁՄ) գործադիր տնօրեն **Կարեն Վարդանյանին**, Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի տնօրեն **Բագրատ Ենգիբարյանին** եւ «Դ-Լինկ ինտերնեշնլ» ընկերության հայաստանյան ներկայացուցչության տնօրեն **Արմեն Շահնազարյանին**:

Կարեն Վարդանյանն այս Digitec-ը առանձնացրեց նախկիններից նրանով, որ մասնակիցների թիվը ավելացել է՝ 40-50-ի փոխարեն հասնելով 65-ի, եւ որ այցելուների թիվը կհասնի 15 հազարի, նախորդ տարվա 12 հազարի փոխարեն: Հաջորդ տարբերությունն այն է, որ զգալի թվով նոր ընկերություններ են ներկայանալու: Առաջին անգամ Հայաստանում Digitec-ին մասնակցելու են օտարերկրյա հայտնի ընկերություններ՝ գերմանական «Կրոնեն», սինգապուրյան «Սինգապուր տեխնոլոգիս» եւ այլն: Դա Կարեն Վարդանյանին հիմք է տալիս ասելու, որ այս ցուցահանդեսը միջազգային դարձնելու առնչությամբ իրենց երազանքը իրականություն է դարձել:

Բագրատ Ենգիբարյանն էլ այն կարծիքը հայտնեց, որ Digitec-ը զարգացել է նաեւ որակապես: Այս տարի դրան մասնակցելու են նաեւ կրթական հաստատությունները, այդ թվում՝ դպրոցներ, որոնք ներկայացնելու են իրենց տեխնոլոգիական նոր լուծումները: Բացի դրանից, միջազգային ճանաչում ունեցող շատ ընկերություններ Հայաստանում սկսելու են գործել հենց Digitec-ին մասնակցելուց:

Արմեն Շահնազարյանն իր հերթին գոհունակություն հայտնեց, որ մասնակիցների մեջ կան ընկերություններ, որոնց անգամ իրենք չգիտեն, եւ Digitec-ը լավ առիթ է միմյանց ճանաչելու համար:

«1,5 մլն ինտերնետի բաժանորդների հայտարարությունը գովազդային է»

Պատասխանելով լրագրողների այն հարցին, թե ի՞նչ կարծիքի են նախօրեին հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի անդամ Սամվել Արաբաջյանի այն հայտարարության կապակցությամբ, որ Հայաստանում 1,5 մլն ինտերնետ օգտագործողներ կան, ԻՏՁՄ գործադիր տնօրեն Կարեն Վարդանյանն ասաց, որ ինքը չգիտի, թե ի՞նչ մեթոդոլոգիայով է այդ հաշվարկն արել Սամվել Արաբաջյանը, եւ եթե դրանց մեջ հաշվում են նաեւ սմարտֆոնները, դա այլ բան է: Սակայն օպտիկական ինտերնետի օգտագործողների թիվը շատ եւ շատ ավելի փոքր է: Կարեն Վարդանյանի կարծիքով, այդ հայտարարությունն ավելի շուտ գովազդային բնույթի է: «Եթե հիմա հայտարարում ենք 1,5 մլն, եկող տարի կարելի է հայտարարել 3 մլն, իսկ հետո՝ 3 մլն-ից ավելի, այսինքն՝ մեր երկրի բնակչությունից ավելի ինտերնետ օգտագործողների մասին», ասաց նա, ավելացնելով, որ պետք է ճիշտ թիվը հիմք ընդունենք եւ փորձենք այդ ցուցանիշը ավելացնել:

«Համակարգիչ բոլորին» ծրագիրը՝ այժմ էլ նոյեմբերից

«Համակարգիչ բոլորի համար» ծրագիրը ե՞րբ կսկսվի՝ հարցին երեկ տեղի ունեցած մամուլի ասուլիսում պատասխանելով, Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի տնօրեն Բագրատ Ենգիբարյանը նախ տեղեկացրեց, որ Հայաստանում համակարգիչների թափանցման մակարդակը 20 տոկոս է: Նա նաեւ հայտնեց, որ «Համակարգիչ բոլորին» ծրագրի փորձնական փուլն այժմ ընթացքի մեջ է, իսկ բուն ծրագրի սկիզբը հետաձգվեց, քանի որ բանակցություններ են ընթանում Համաշխարհային բանկի հետ, որը պետք է ֆինանսավորի ծրագիրը: ՀԲ-ն պետք է տրամադրի 3 մլն դոլար, եթե ծրագրի պայմանները բավարարեն կառույցի պահանջներին: Ծրագիրը պետք է համաֆինանսավորի Հայաստանի կառավարությունը, որը երկու շաբաթ առաջ այդ մասին որոշում ընդունեց: Այդ պատճառներով էլ հավանական է, որ ծրագիրը սկսվի 1 ամսվա ընթացքում: Ներկայումս ընտրվել են այն 40 խանութները, որտեղ պետք է վաճառվեն այդ համակարգիչները, սկսվել է վաճառողների վերապատրաստումը, իսկ «Մայքրոսոֆտը» հայտարարել է, որ Հայաստանի համար կունենա հատուկ զեղչեր: Համակարգիչները կլինեն 6 տեսակի, իսկ մատակարար ընկերությունները կլինեն առնվազն 2-ը: «Ժամանակից առաջ անցնելով, ասեմ նաեւ, որ առաջիկայում կհայտարարվի եւս 2 ծրագիր՝ «Համակարգիչ ուսուցիչների համար» եւ «Համակարգիչ աշակերտների համար», նշեց Բագրատ Ենգիբարյանը:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Դիարբեքիրի Սուրբ Կիրակոս եկեղեցու վերանորոգումը կավարտվի մի տարի հետո

Հոկտեմբերի 23-ին, ինչպես հաղորդել ենք, Դիարբեքիրի սուրբ Կիրակոս եկեղեցում 30 տարի անց առաջին անգամ աղոթք է հնչել: Պոլսո պատրիարքի փոխանորդ Արամ արքեպիսկոպոս Աթեշյանը եւ Դիարբեքիրի քաղաքապետ Օսման Բայդեմիրը եկեղեցում միասին են աղոթել: Եկեղեցու վերականգնումը նախաձեռնել էին Դիարբեքիրի քաղաքապետարանն ու «Ս. Կիրակոս եկեղեցու վերանորոգման հիմնադրամը»: Հիմնադրամի ու քաղաքապետարանի անդամները եւս մասնակցել են աղոթքին:

Գիտությունների ազգային ակադեմիայի արեւելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժնի գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու **Քրիստինե Մելքոնյանի** փոխանցմամբ՝ Սուրբ Կիրակոսի վերանորոգումը մի տարի առաջ է սկսվել՝ 2009 թվականի հոկտեմբերին: «Թուրքիայի կառավարությունը այս գործում Դիարբեքիրի քաղաքապետարանին եւ տեղի հայերին չօգնեց, բայց եւ չխոչընդոտեց», երեկ «Արմաս» ակումբում նշեց Ք. Մելքոնյանը: Սուրբ Կիրակոսի վերանորոգման ծախսերը կազմել են 2,5 միլիոն դոլար, որի 70 տոկոսը հոգացել է հիմնադրամը, իսկ 30 տոկոսը՝ քաղաքապետարանը: Սրան նույնպես **«Ազգը»** անդրադարձել է: Եկեղեցու վերանորոգման աշխատանքները կավարտվեն մի տարի հետո: Ներկայումս Դիարբեքիրում ընդամենը մի քանի հայ ընտանիքներ են ապրում:

Պատմաբան **Ռաֆիկ Թադեւոսյանը** նշեց, որ Դիարբեքիրը զուտ քրդական քաղաք է դարձել. «Քաղաքում հայեր ու հույներ գրեթե չկան, թուրքերն առանձնակի տոկոս չեն կազմում»: Իսկ ինչպե՞ս եղավ, որ թուրքերը Ս. Կիրակոս եկեղեցում հնչած աղոթքի կապակցությամբ աղմուկ չբարձրացրին եւ շոու չսարքեցին, Ռաֆիկ Թադեւոսյանն իր իսկ հարցադրմանն այսպես պատասխանեց. «Թուրքերը պարզապես չուզեցին գրգռել քրդերին»:

Քրիստինե Մելքոնյանի կարծիքով էլ՝ Դիարբեքիրի քաղաքապետը եկեղեցու վերականգնումը ձեռնարկելով նախ եւ առաջ հետապնդել է այնպիսի քաղաքականություն, որն ուղղված է տարածաշրջանի զարգացմանն ու հայերի հետ հարաբերությունները բարելավելուն: Բացի դրանից՝ Թուրքիայում հասկանում են, որ հայկական եկեղեցիների վերականգնումը նպաստում է իրենց երկրի տնտեսության զարգացմանը: Կրկին անդրադառնալով թուրքական կառավարության վերաբերմունքին՝ Ք. Մելքոնյանը նշեց, որ վարչապետ Ռեջեփ Թայիբ Էրդողանը չի խոչընդոտում եկեղեցու վերանորոգման աշխատանքներին, որովհետեւ առաջին հերթին անհանգստանում է արտաքին աշխարհի արձագանքներից:

Ի. Պ.

ՀԱՐՑԱԳՐՈՒՄՆԵՐ

«Ո՞ւր ես, պետություն», հարցնում է Դեմկուսը

Երեկ հայտարարություն է տարածել Հայաստանի դեմոկրատական կուսակցությունը «Ո՞ւր ես, պետություն» վերնագրով. «Հայաստանում ամիսներ ի վեր մոլեգնում է գների համատարած աճը, որի դեմն առնելուն ուղղված «հակաճգնաժամային ծրագրերը» փաստացի ծիսական բնույթ ունեն: Մեր կուսակցության կողմից ախտորոշված հիվանդության պատճառներն ու տնտեսության առողջացումը մատնանշող քայլերը ՀՀ կառավարության կողմից չդարձան արդյունավետ գործողություններ իրականացում: Այլ կերպ չէր էլ կարող լինել, քանի որ ներմուծված եւ հարկադիր որդեգրված նեոլիբերալիզմի սնանկ գաղափարախոսությունն ու պրակտիկան արգելակում են երկրում համակարգային փոփոխությունների իրագործումը: Դրան ավելանում են նաեւ նեղկլանային շահերը, որոնք ազատ շուկայական հայաստանյան «դրախտը» մեր ժողովրդի մեծամասնության համար դժոխք դարձրին»: Այս նախաբանից հետո ՀԴԿ-ն իր հայտարարության մեջ նշում է, որ նվազագույնի է հասցված պետության կարգավորիչ դերը, իշխանությունները իրականում անզոր են պայքարելու օլիգոպոլիաների, մենաշնորհների, սվերայնության եւ կոռուպցիայի դեմ, իսկ Երեւանի կենտրոնում կառուցված «պոտյոմկինյան գյուղը», պերճաշուք առանձնատներն ու զվարճավայրերը, «հրթիռային» ամենօրյա հրավառություններով համեմված «զանգվածային» խրախճանքներն ընդամենը թաքցնում են իրական Հայաստանը՝ աղքատ, սոցիալական անարդարության ու իրավական ամենաթողության տակ կքած ժողովրդի դեռեւս լուռ մեծամասնությանը. «Ժողովրդին պետք չէ մեծահարուստների «բարեհաջողությունը», որի ֆինանսական աղբյուրը ներդրծին ոչ համարժեք գերշահույթն է, վարձու աշխատողին չնչին աշխատավարձ վճարելն է, չհարկված ապրանքների վաճառքն է, պահանջվող մախային վճարումներից խուսափելն է, եւ այլն, եւ այլն... Այս կերպ «բարեգործության» արդյունքում օր օրի բարձրանում են առաջին անհրաժեշտության ապրանքների գները: Գողը, ով էլ որ լինի, ինչ «քաղաքակիրթ» ճանապարհով էլ գրպանի ժողովրդի հասանելիքը, պետք է նստի ճաղերի հետեւում: Սա է իրավական պետության գործառույթներից կարեւորագույնը, որի իրականացման պահանջը մշտապես ներկայացնում է հասարակությունը»:

Զգուշացնելով իշխանություններին՝ Դեմկուսը գործողությունների ծրագիր է առաջարկում՝ պետական պահուստային պաշարների ձեւավորում, անհրաժեշտության դեպքում ապրանքների ինտերվենցիա շուկայում, գյուղատնտեսության մեջ գնալ տնտեսությունների խոշորացման ճանապարհով, պաշտել սվերում գործող ձեռնարկատերերին, պրոգրեսիվ հարկի համակարգը ներմուծել՝ որպես օլիգոպոլիաների դեմ պայքարի միջոց. «Այս եւ ազգային-պետական անվտանգության եզրեր ունեցող առաջարկներն անտեսելու դեպքում երկրին սպառնում է սոցիալական լարվածություն, որի դրսեւորումներն արտահայտվելու են անկանխատեսելի տարբեր ձեւերով, ընդհուպ ժողովրդական ընդվզման ալիքի բարձրացում», զգուշացնում է Դեմկուսը:

Միգրացիոն հոսքերի մասին երկու պատկերացում՝ Դալլաֆյանի եւ վարչապետի

Գիտնականների հաշվարկներով՝ 2020 թվականին այսօրվա նկատմամբ Հայաստանի բնակչությունը կավելանա ընդամենը 100 հազարով, մինչդեռ Ադրբեջանում բնակչությունը հիմիկվա համեմատ կաճի 1,2, Թուրքիայում 10,9, Իրանում 11, 3 մլն մարդով: Ինչպիսի՞ մոտակա եւ հեռանկարային ծրագրեր ունի կառավարությունը Հայաստանի դեմոգրաֆիական վիճակը արմատապես փոխելու ուղղությամբ: Այս հարցը երեկ Ազգային ժողով-կառավարություն հարցուպատասխանի ժամանակ բարձրացրեց պատգամավոր Վիկտոր Դալլաֆյանը: Վարչապետ Տիգրան Սարգսյանը դա պետության առաջ ծառացած կարեւորագույն խնդիր համարեց: Պատասխանել է հայեցակարգ, որի քննարկումները տեղի են ունեցել վարչապետի մոտ՝ որի նպատակն է գնահատել պետության միգրացիոն քաղաքականությունը եւ դեմոգրաֆիական իրավիճակի շտկման եղանակները: Հասկանալի է, որ սոցիալ տնտեսական իրավիճակի վատթարացման պարագայում տեղի են ունենում միգրացիոն մեծ հոսքեր, իսկ տնտեսական իրավիճակի բարելավման պարագայում՝ ներհոսք: Սակայն, այս բոլորը նշելով, վարչապետը նկատել է, թե վերջին տարիներին արտագաղթի տեմպերը կտրուկ նվազել են՝ դեռեւս հաշվեկշիռը բացասական է, բայց դրական միտումներ առկա են: Նրա տեղեկացմամբ՝ ազգային անվտանգության ռազմավարության տեսակետից մշակվող հայեցակարգը նպատակ ունի բարենպաստ պայմաններ ստեղծել Հայաստանում մեր հայրենակիցների վերադարձի համար: Վերջին շրջանում Միջին Ասիայից պոտենցիալ ներգաղթի միտում է նկատվել, այդ ուղղությամբ աշխատանքներ տարվում են: Ըստ վարչապետի՝ հարցի լուծման առումով լավագույն մոտեցում է նկատվում այն, որ պետությունը, ՀԿ-ների հետ գործակցելով, ստեղծի ենթակառուցվածքներ, գտնի համապատասխան ֆինանսական միջոցներ՝ որոնք կտրամադրվեն վերադարձող ընտանիքներին, որպեսզի առաջին փուլում ոտքի կանգնեն, մինչեւ ինտեգրվեն հասարակությանը:

Վիկտոր Դալլաֆյանն իր կողմից, հղում անելով գիտական տվյալների, նշել է, որ Հայաստանից արտագաղթում են երեխաները՝ արտագաղթում է մեր ապագան, երկրորդ խումբը մինչեւ տասնչորս տարեկաններն են, իսկ արտագաղթողների ավելի քան 50 տոկոսը 20-40 տարեկաններն են:

Մ. Խ.

Յունիբանկն առաջարկում է ավտովարկավորման նոր ծրագիր երկրորդային շուկայում

Յունիբանկն առաջարկում է ավտովարկավորման նոր ծրագիր, որի շրջանակներում վարկային միջոցները՝ օվերդրաֆտը, տրամադրվում է երկրորդային շուկայից ավտոմեքենաներ /ոչ պակաս քան 2007թ.-ի թողարկման/ ձեռք բերելու համար: Ավտովարկերի գումարը կազմում է մինչեւ 60 000 ԱՄՆ դոլար, կանխավճարը՝ 50%: Վարկերի տարեկան տոկոսադույքը սահմանված է 18%, ժամկետը՝ 36 ամիս:

Նոր վարկատեսակը մշակվել է Բանկի՝ մանրածախ բիզնեսի զարգացման ծրագրի շրջանակներում: Յունիբանկի ավտովարկավորման ծրագրերը միշտ առանձնացել են շահավետ պայմաններով, որոշումների ընդունման արագությամբ եւ հաճախորդների նկատմամբ լոյալ վերաբերմունքով: Ահա, թե ինչու ավտովարկավորման ծավալներով Յունիբանկը ՀՀ բանկային համակարգի առաջատարն է:

Հիշեցնենք նաեւ, որ Յունիբանկն առաջարկում է վարկեր նոր ավտոմեքենաների ձեռքբերման համար հետեւյալ պայմաններով. նվազագույն կանխավճարը՝ 20%, տարեկան տոկոսադույքը՝ սկսած 15%-ից, վարկի առավելագույն ժամկետը՝ 60 ամիս: Վարկի գումարը կազմում է մինչեւ 15 մլն դրամ:

Ադրբեջանի ազգային հերոսը

Ի՞նչ եք կարծում, եթե երեխային, որը ինքնահաստատման խնդիր ունի, չպատժես գործած բացահայտ սխալի համար, ի՞նչ կանի նա «վաղը»: Իհարկե նույնը. օրինակ՝ եթե գողացել է, ապա վաղն էլ կգողանա, եթե սպանել է, վաղն էլ կսպանի, եթե լկտի է՝ այդպես էլ կմնա: Նման երեխա ունեցող ծնողները շատ լավ գիտեն, որ ականջները ձգելը երբեմն դրականորեն է ազդում առաջին հերթին երեխայի, ապա նաեւ նրա ու ամբողջ ընտանիքի ապագայի վրա: Հետեւաբար, եթե ուզում ես, որ երեխադ աչքի չընկնի նշված ոլորտներից որեւէ մեկում, ապա անհրաժեշտ է ձգել նրա ականջները, երբ նա առաջին անգամ գողանում է, ասենք, հարեւանի հավը:

«Սֆթա»

Տեղափոխվենք տիպիկ ադրբեջանական գյուղ, տիպիկ ադրբեջանական ընտանիք: Պատկերացնենք՝ ընտանիքի հայրը զոհվել է ղարաբաղյան պատերազմում, եւ այդ ընտանիքում մեծանում է «փոքրիկ Զեյհունը»: Բնականաբար, Զեյհունը շատ է սիրում երեկոյան, սաֆ վառարանի առջեւ զրուցել պապիկի՝ ավագ Զեյհունի հետ պատերազմի մասին, որտեղ զոհվել է իր հայրը: Եթե նա չուզենա էլ, ապա պապիկի «միջամտությամբ» կլցվի ատելությամբ դեպի հայը, հայկականը: Բակում Զեյհունն ունի ընկերներ, որոնց պատմում է «պապիկի պատմածները», անշուշտ, հայատյացների թիվը սկսում է աճել:

Մի պահ հեռանանք փոքրիկ Զեյհունի «հայրենասիրական դաստիարակությունից» եւ պատկերացնենք մի այլ իրավիճակ:

Հարեւանի հավերը հարեւանի բակում քուջուջ են անում: Զեյհունը, վաղուց աչքի տակ առած լինելով դրանցից մեկը, հաշվի առնելով, որ ինքը Ադրբեջանի հերոսի որդի է, գողանում է նրանցից մեկը եւ բերում տուն: Ինչ եք կարծում, ինչ է սպասում նրան տանը՝ տիպիկ ադրբեջանական ընտանիքում: Զեյհունին սպասում է մեծ տոնախմբություն՝ բոլոր հարազատների մասնակցությամբ: Բոլորը եկել են աչալուսանքի՝ տղայի «սֆթա»-ի կապակցությամբ:

Հոկտեմբերի 22-ի համարում «**Ազգը**», հիմնվելով հոգեբան Կարինե Նալչաջյանի խոսքերի վրա, գրեց, որ ադրբեջանական ավանդույթներում գողությունը համարվում է գովելի արարք: Չէ՞ որ երեխան «ճարպկանում» է, կարողանում է «գլխի ճարը» տեսնել:

Ուրեմն տիպիկ ադրբեջանական գյուղում, տիպիկ ադրբեջանական ընտանիքում կա արդեն փոքրիկ գող Զեյհունը:

«Ղարաբաղը մերն է, Զանգեզուրն էլ, Էրիվանն էլ...»

Դպրոցական տարիներին Զեյհունի հայատյացությունը կրկնապատկվում է. նա պապիկից լսել էր «հինավուրց Ադրբեջանի» մասին, բայց դպրոցում արդեն ծանոթանում է պատմական գիտությունների թեկնածու Իլհամ Ալիեւի «փաստացի հորինվածքին»: Զեյհունն իմանում է, որ իր պապիկը, անշուշտ, ճիշտ էր, երբ ասում էր՝ «Ղարաբաղը, Նախիջեւանը, Զանգեզուրը, Էրիվանը...մերն են»: Այս տարիներին արդեն դեռահասը հաստատապես որոշում է պայքարել «ստի ու կեղծիքի դեմ. պայքարել հայի դեմ»: Իսկ ամեն երեկո ավագ Զեյհունը նրան 20 մանաթ է տալիս՝ Ադրբեջանի պատմությունից գերազանց գնահատականների համար՝ «Երեխային պետք է խրախուսել» ասելով:

Մի օր Զեյհունը ընկերների հետ դպրոցի բակում ծեծում է ազգությամբ ռուս Միխայիլին, որն ընդամենը հրաժարվել էր նրանց հետ գնալ մզկիթ: Այս արարքի համար դպրոցի տնօրենը իր առանձնասենյակ է կանչում «հերոսին» ու... շնորհակալություն հայտնում ամբողջ դպրոցի անունից: Պապիկն այդ երեկո «ուրիշ գրպանից» 50 մանաթ բաշխեց «հերոս-թոռնիկին»:

Հենց դպրոցական տարիներին Զեյհունը ծանոթանում է Մուրադի հետ, որը, սակայն, որոշ ժամանակ անց ընտանիքով մեկնում է Մոսկվա, եւ որին դեռ կանդրադառնանք:

«Քո խոսքն՝ ինձ համար օրենք»

Արդեն շրջանավարտ Զեյհունը որոշում է դառնալ լրագրող: Պապիկը ոգեւորված է. Ադրբեջանում Իլհամ Ալիեւը նույնիսկ բնակարաններ է տրամադրում լրագրողներին, իհարկե՝ ... ոմանց, «հատընտիրներին»: Հաշվի առնելով, որ Զեյհունը Ադրբեջանի հերոսի որդի է, թե՛ բուհում, թե՛ արդեն մասնագիտական գործունեության ընթացքում հենց նրան են վստահվում Ղարաբաղի մասին հրապարակումներն ու ռեպորտաժները. «Տղան ցավ ունի, գիտի իրական պատմությունը. այն զգում է»: Եվ ստացվում է այնպես, որ նաեւ Զեյհունի հրապարակումներով աշխարհը ծանոթանում է «Ղարաբաղի իրական պատմությանը»: «Ադրբեջանի ազգային հերոսները» հրապարակման եւ «նախագահ Իլհամ Ալիեւի հայտարարությունները հավուր պատշաճի» ներկայացնելու առիթով Զեյհունը անձամբ Իլհամ Ալիեւից ստանում է բնակարանի բանալիներ: Բնակարանի մի հյուրասենյակում տեղադրվում է կրտսեր Ալիեւի լուսանկարը «Քո խոսքն ինձ համար օրենք է» մակագրությամբ. պապիկը ցնծում է:

«Դիմացն էլ, հետեւն էլ՝ մեր հողերն են»

Հենց այս բառերն էին Զեյհունի մտքում, երբ նա կանգնած էր ղարաբաղա-ադրբեջանական սահմանագծին՝ որպես «հզորագույն» Ադրբեջանի բանակի զինվոր: Մանուկ ժամանակվանից հայատյաց երիտասարդի համար բնականաբար որեւէ խնդիր չկա ամեն ժամի կրակ բացել «նենգ հակառակորդի» ուղղությամբ, եւ Զեյհունը այդպես հաճախ է վարվում, չէ՞ որ «դիմացն էլ, հետեւն էլ մեր հողերն են»: Այստեղ փորձենք հասկանալ մեկ այլ բան. ո՞րն է ավելի տրամաբանական, երբ առաջինը կրակում է պաշտպանվող զինվորը, որը որեւէ խնդիր չունի, թե՞ հարձակվողը, որը խնդիր ունի ապացուցելու, ավելին՝ ինքնահաստատվելու, «հետ գրավելու»:

Զեյհունի բանակային կյանքին շատ չանդրադառնանք. միայն նշենք, որ նրան մի քանի անգամ ծեծում են սպաները, մի քանի անգամ ծառայակից զինվորների հետ է կռվում, բազմիցս որոշում է փախչել, երբեմն ստացվում է, բայց տանը պապիկը հորդորում է նորից վերադառնալ՝ «սրբազան պարտքին»: «Չէ՞ որ դու Ադրբեջանի ազգային հերոսի որդի ես», պապիկի այս խոսքերը անընդհատ Զեյհունի ականջներում էին, սակայն նրա մտքով երբեք չէր անցնում՝ իսկ այդ դեպքում ինչո՞ւ են իրեն ծեծում հայրենի բանակի սպաները:

Մի գիշեր Զեյհունը, որն արդեն դիպուկահար էր դարձել, նշան բռնեց եւ սպանեց Ղարաբաղի սահմանին կանգնած Վարդանին. վերջինս 19 տարեկան էր: Զեյհունը դարձավ Ադրբեջանի հերոսի հերոս որդի:

Լրահոս

ԼՂՀ պաշտպանության բանակի մամուլի ծառայությունից հայտնում են, որ հոկտեմբերի 26-ին, ժամը 16:45-ի սահմաններում ղարաբաղա-ադրբեջանական զորքերի շփման գծի հյուսիսարեւելյան ուղղությամբ (Մարտակերտ) տեղակայված դիրքերի վրա հակառակորդի ձեռնարկած հերթական հրաձգությունից զոհվել է Ստեփանակերտից զորակոչված ՊԲ-ի շարային զինծառայող 20-ամյա Հարութ Ասոյի Գրիգորյանը: Դեպքի մանրամասները ճշտվում են: Հայտարարություն է տարածել նաեւ ՀՀ պաշտպանության նախարարությունը. «ՀՀ ՊՆ-ն խստորեն դատապարտում է շփման գծում ԵԱՀԿ առաքելության մոնիտորինգի անցկացումից ժամեր անց եւ ՌԴ նախագահի միջնորդությամբ Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպման նախօրեին իրադրության աղակայունացման ադրբեջանական հերթական փորձը: ՀՀ ՊՆ-ն խորապես ցավակցում է Հարութ Գրիգորյանի հարազատներին եւ հայտարարում, որ Ադրբեջանի ԶՈՒ-ի նման սադրանքների հետեւանքների ողջ պատասխանատվությունն ընկնում է ադրբեջանական կողմի վրա»:

Երեկ «**Ազգը**» հենց Թեհրանից տեղեկացրեց, որ ադրբեջանցի լրագրողը (հետաքրքրական կլիներ պարզել անունը, միգուցե՝ Զեյհուն-Հ. Ա.) վայրենաբար ներխուժել է Իրանի մայրաքաղաքում մեկնարկած Մամուլի 17-րդ միջազգային ցուցահանդեսում Հայաստանի տաղավար եւ պոկել այնտեղից Ղարաբաղին նվիրված պաստառը: Այս կապակցությամբ մանրամասնությունները երեկ «**Ազգը**» ներկայացրեց՝ Թեհրան գործուղված մեր լրագրողի միջոցով:

Զեյհունի ընկեր Մուրադը

Ինչպես խոստացանք, այժմ մի փոքր անդրադառնանք Ադրբեջանի հերոս Զեյհունի ընկեր Մուրադին, որը դպրոցական տարիներից ընտանիքով տեղափոխվեց Մոսկվա: Մուրադը գնաց ռուսական դպրոց, այնտեղ ունեցավ մի քանի այլազգի, այդ թվում՝ հայ ընկերներ: Մուրադի սիրած առարկան դարձավ պատմությունը, պարզապես մոսկովյան դպրոցում այն չէր խմբագրել Իլհամ Ալիեւը: Երբ դեռ դպրոցական էր պարբերաբար հեռախոսով խոսում էր Զեյհունի հետ՝ Բաքու. «Ես այստեղ հայ ընկերներ ունեմ. նրանք շատ լավն են», ասում էր Մուրադը: Զեյհունը այլեւս չցանկացավ խոսել մանկական ընկերոջ հետ:

Մուրադն ամուսնանում է հայուհու՝ Անուշի հետ, այժմ նրանք ունեն երկու որդի՝ Ալին եւ Արտավազդը: Ալին Մուրադի պապի անունն է, Արտավազդը՝ Անուշի: Սակայն ոչ Մուրադի, ոչ Անուշի ընտանիքները երիտասարդ ընտանիքին չեն ընդունում. Մոսկվա-Երեւան եւ Մոսկվա-Բաքու ճանապարհները նրանց համար այլեւս չկան:

Ադրբեջանի հերոսները՝ իրական հերոսները, սովորաբար չճանաչված են լինում եւ անտեսված:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

ԽՐԱՏԱԼԻ

Ի պատասխան Իլհամ Ալիեւի «տեղանվանագիտության»

ՄԳԻՄՕ-ի «փայլուն շրջանավարտ» Իլհամ Ալիեւը, հնարավոր է, իր ժողովրդի պատմությանը մի փիչ տեղյակ է: Ասենք, ռուսերեն թարգմանությամբ կարդացել է միրզա Ադիգյոզալ-բեկի «Ղարաբաղ նամե»-ն եւ եզրակացրել, որ եթե «Փանահ Ալին կառուցել է Բայաթ, Շահբուլաղ բերդերը, հետո՝ Շուշին, ուր տեղափոխել է Շահբուլաղի եւ շրջակայքի բոլոր բնակիչներին», ապա «Լեռնային Ղարաբաղը իսկական ադրբեջանական հող է»:

Կարեւոր չէ, որ միրզա Ադիգյոզալ-բեկը Շուշիի վերջին խանի քարտուղարն էր եւ իր «աշխատությունը» գրել է պատվերով: Էական չհամարենք նաեւ այն, որ հեղինակը Փանահ Ալիին հստակորեն անվանում է «Իրանից եկվոր»: Փաստը, համենայն դեպս, կա. մարդը քաղաք է հիմնադրել: Ճիշտ է՝ Վարանդայի հողում: Եվ այնքան «տեր» է եղել, որ երբ անփառունակ մեռել է, նրան, նույն միրզա Ադիգյոզալ-բեկի վկայությամբ, «թաղել են Աղդամի իր կալվածքում»: Իսկ այդ «կալվածքն» էլ, ինչպես Ռաֆֆին է վկայում, Փանահ-Ալին «գնել էր Խաչենի մելիքներից»:

Ուշադրություն չդարձնենք փաստին, որ «Ղարաբաղի խանությունը ստեղծվել է» 1750-ական թվականներին եւ «գոյատեւել» ընդամենը ոչ ավելի, քան 40 տարի: Եւ այդ «ադրբեջանական պետության» ոչ մի ինքնակոչ կառավարչի այդպես էլ չի հաջողվել վերացնել հայ ազնվականության ավատատիրական իրավունքներն իր տարածքի նկատմամբ: Եվ այդ իրավունքն այնքան օրինական է եղել, որ նույնիսկ խորհրդային Ադրբեջանի կենտգործկոմը, հռչակելով Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ, հարկ է համարել ընդգծել, որ «հողը, ջուրը, անտառները մնում են որպես ներկա տերերի սեփականություն»:

Իսկ այժմ, հետեւելով Իլհամ Ալիեւի տրամաբանությանը, փորձենք ստուգաբանել մի քանի ադրբեջանական տեղանուններ:

Ղաջար- բառն ինքնին հուշում է, որ բնակավայրը հիմնադրել են «ղաջարները», իսկ բոլորին է հայտնի, որ այդ ցեղախմբի «բուն հայրենիքը» Ատրպատականում է՝ Իրանի հյուսիսում:

Ղարադաղլու- Ղարադաղը Ատրպատականի գավառ է, որտեղից եկածներն էլ նոր գյուղին տվել են իրենց «պատմական հայրենիքի» անունը:

Քենգերլի- նույնպես թուրքական ցեղախմբի անուն է, որի «հայրենիքը» դարձյալ Ատրպատականն է:

Զինլի- Ատրպատականից եկած եւս մի թափառախմբի անուն է:

Շիրվանլու- Շիրվանից եկածներ, շիրվանցիների գյուղ: Շիրվանը Կուրի ձախափնյակի տարածք է:

Քյուրդլյար- անվանումն արդեն իսկ ամեն ինչ ասում է՝ քրդեր, քրդերի գյուղ:

Բաղլը- փայա- բառացիորեն նշանակում է «փակ գոմ» եւ վկայում, որ այն վաչկատուն անասնապահներն են հիմնադրել:

Օրթա- փայա- «միջնագոմ»:

Գյունե-փայա- «արեւահայաց գոմ»:

Ղարաչիլար- թուրքերեն «դարաչի» ասում են գնչուներին:

Այսպես կարելի է երկար շարունակել: Տեղանունները հուշում են, որ թուրքական տարրը եկվոր է: Իրոք, եկել են, տեսել, որ մի տեղ շատ ընկուզենի կա եւ բնակավայրն անվանել են «Գոզլու»: Մի ուրիշ տեղ սերկեւիլն է առատ եղել, գյուղն ստացել է «Այվալու» անունը, իսկ մեկ այլ դեպքում քոչվորին դուր է եկել սառն աղբյուրը, եւ նա տեղանքը կնքել է «Սոյուխբուլաղ»:

Այնպես որ, Ադրբեջանի նախագահը թող զբաղվի իր անմիջական պարտականություններով: Գիտական ասպարեզում ադրբեջանցի դիլետանտներն առանց այդ էլ չափազանց շատ են, որ օրվա հաց վաստակում են «փանահաբանական հայտնագործություններով»: Ինչ կարիք կա, որ միլիարդավոր դոլարների հարստություն ունեցող նախագահը նրանց հացին «վայիս» դառնա:

ՎԱՀԲԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Հորինված պատմությունն ու իրական փաստերը

Ինչպես փոխանցում է Panorama.am-ը՝ լույս է տեսել Լոնդոնում Հայաստանի նախկին պատվո հյուպատոս, Armenian institute կազմակերպության հոգաբարձու, քարտեզագետ, Հայաստանի հնագույն քարտեզների վերաբերյալ երեք աշխատությունների հեղինակ, ՀՀ ԳԱԱ պատվո դոկտոր Ռուբեն Գալչյանի «Հորինված պատմություն. Ադրբեջան եւ Հայաստան, կեղծիքներ ու փաստեր» գրքի ռուսերեն տարբերակը: Գրքի անգլերեն տարբերակը լույս է տեսել 2009-ին, եւ ժամանակին «Ազգը» տեղեկացրել է: Այստեղ հղում է կատարված 130 գիտական աղբյուրների եւ փաստերի: Այն գրված է որպես պատասխան անցյալ 50 տարիների ադրբեջանական գիտական հրատարակություններում առկա հակահայ հերյուրանքների ու կեղծիքների, որոնք վերջին տարիների ընթացքում նավթային եկամտից ստացված ներդրումներով արդեն հասել են ահռելի չափերի ու չափազանցությունների: Ներկայացվում է «Ադրբեջանի Հանրապետություն» կոչվող երկրի ծնունդը 1918-ին, բերված են պատմական փաստեր, թե որն է Ադրբեջանը, որը՝ Աղվանքը, եւ ինչ է նրանց կապը:

Ի հակակշիռ ադրբեջանական այն փաստերի, թե իբր հայերը Կովկասի տարածքում եկվորներ են, իսկ ադրբեջանցիները՝ բնիկներ, բերված են բազմաթիվ պատմիչների ու ճանապարհորդների փաստեր, վկայություններ, ինչպես նաեւ մեջբերումներ 18-19-րդ դարերի տեղաբնակ թուրք-թաթար պատմիչների ու պատմաբանների գրքերից, որոնց արդի ռուսերեն եւ ադրբեջաներեն թարգմանություններից հանված են «հայ» եւ «Հայաստան» անվանումները եւ երբեմն էլ նույնիսկ դրանց մասին նյութեր պարունակող գլուխները: Անդրադարձ է կատարվում նաեւ ադրբեջանական այն գրքին, ուր Հայաստանի քարտեզի տակ գրված է «Արեւմտյան Ադրբեջան», եւ Հայաստանի բոլոր պատմական հուշարձաններն ու եկեղեցիները ներկայացվում են որպես «ուրարտայուրքական, աղվանա-թյուրքական, քրիստոնեա-թյուրքական»: Ավելի քան մեկ տարի առաջ Ռ. Գալչյանը, դիմելով ՀՀ իշխանություններին, զարմանք էր հայտնել, թե ինչու մեր երկիրը Ադրբեջանի դեմ հայցով չի դիմում միջազգային դատարան, որովհետեւ վերջին 20 տարում՝ անկախությունից հետո, Ադրբեջանի կառավարությունը «Հեյդար Ալիեւի հիմնադրամի» օժանդակությամբ միլիոններ է ծախսում հակահայ պրոպագանդան եւ կեղծիքները տարածելու համար:

«Սա միջազգային օրենքի տեսանկյունից կեղծիք է, սրա դեմը պետք է առնել: Եթե հակառակը չխոսենք, 20, 40, 60 տարի հետո, ով հետաքրքրված լինի պատմությամբ եւ գրադարաններին դիմի, միայն կեղծիքներով լի ադրբեջանական գրականություն կգտնի, հետեւաբար նրանց սերը կդառնան փաստեր», նկատել է Ռուբեն Գալչյանը:

Հ. Ա.

Աղագա ունի՞ Հայ կաթոլիկ եկեղեցին Ռուսաստանում

Ռուսաստանյան «Նեզավիսիմայա գազետան» զուգահեռաբար երկու հարցազրույց էր հրապարակել Հայ եկեղեցու Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմի առաջնորդ Եզրաս սրբազան Ներսիսյանի եւ Մոսկվայի հայ կաթոլիկների համայնքի ավագ քահանա Գեորգ Նորատունկյանի հետ: Սրբազանի հետ հոգեւոր թեմայով խոսակցությունը ծավալվել էր Ռուսաստանի մայրաքաղաքում եկեղեցական մեծ համալիրի կառուցման ֆոնի վրա: Բնավ էլ ոչ սուբյեկտիվ նկատառումներով (հաճախ եմ **«Ազգի»** էջերում ներկայացրել Եզրաս սրբազանի անխոնջ գործունեությունը), այլ հենց պատկանելությամբ Հայ առաքելական եկեղեցուն, ինձ շատ ավելի հոգեհարազատ էր առաջին նյութը: Իսկ ահա անսովոր, արտասովոր ու գուցեեւ էկզոտիկ տրամադրություններ էին առաջանում, երբ ծանոթանում էի հայ կաթոլիկ քահանայի մտքերին ու դատողություններին: Խոսքն, անշուշտ, չի վերաբերում ինչ-որ դատարկ դատապարտումների, թե ինչո՞ւ են հայերն ընդունել կաթոլիկություն: Դրա համար երեւի եղել են հանգամանքներ, եւ հարկ չկա այստեղ տուրք տալ պատմական էխկուրսներին: Առավել եւս, որ քահանայի այն միտքը, որ ժամանակին Լեհաստանում եղել է մոտ 200-հազարանոց կաթոլիկ հայ համայնք եւ որի հետքն էլ չի մնացել, խորհելու տեղիք է տալիս:

Նորատունկյանի բերած տվյալներով, Ռուսաստանում ապրում է 80-200 հազար կաթոլիկ հայ, որոնք հիմնականում այստեղ են եկել անցյալ դարի իննսունականներին Վրաստանից՝ Ախալքալակից եւ Ախալցխայից: 2001 թվականին Հայ կաթոլիկ եկեղեցու պատրիարք Ներսես-Պետրոս 19-րդը որոշել է, որ այստեղ գոյացել է մեծ համայնք եւ որ այնտեղ պետք է լինի հոգեւոր առաջնորդ: Ներկայումս համայնքներ կան Սոչիում, Ադլերում, Լազարեւսկում, Տուապսեում, Արմավիրում, Կրասնոդարում, Ուլյանովսկում, Դոնի Ռոստովում եւ այլուր: Քահանան լինում է այն վայրերում, որտեղ կա առնվազն 100 կաթոլիկ հայ ընտանիք:

Հայ կաթոլիկ համայնքները Ռուսաստանում դեռեւս պաշտոնապես գրանցված չեն, թեեւ դիմել են համապատասխան իշխանություններին: Բուն Մոսկվայում եկեղեցական կյանքին մասնակցում է ավելի քան երկու հազար ընտանիք: Ռուսաստանում ծառայության են չորս քահանա:

Նորատունկյանը հատուկ նշում է, որ կաթոլիկ հայերի եւ առաքելական հայերի միջեւ չկան այնպիսի էական տարբերություններ, ինչպես կաթոլիկների եւ ուղղափառների միջեւ: Մեզանում փոքր-ինչ տարբեր են որոշ ավանդույթներն ու ծեսերը: Հավատացյալները փոխադարձաբար կարող են լինել երկու եկեղեցիներում էլ:

Կաթոլիկ հայ քահանան թղթակցի խնդրանքով հանգամանորեն պատմում է հայ կաթոլիկ եկեղեցու կառուցվածքի, պատմության, յուրահատկությունների մասին եւ այլն: Ռուսաստանին առնչված դժվարությունների մեջ առանձնացնում է քահանաների սուր պակասը: Բանն այն է, որ Ռուսաստանը չի դիտվել որպես «հեռանկարային» երկիր, եւ ռուսերեն իմացող քահանաներ չեն պատրաստվել: Եվ երբ պատրիարքը ծառայություն է առաջարկում Ռուսաստանում, շատերը հրաժարվում են հենց այդ պատճառով: Առաջինը Ռուսաստանում ծառայել է 6 տարի, ինքը՝ Նորատունկյանը, երեք տարի, սպասվում է նորի գալուստը:

Թերթի թղթակցի այն հարցին, թե, այդուհանդերձ, Հայ կաթոլիկ եկեղեցին ապագա ունի՞ Ռուսաստանում, Նորատունկյանը պատասխանում է. «Ապագա՞: Դա միայն Աստված գիտի»: Սակայն նա հույս է հայտնում, որ ամեն ինչ կարվի, որ Ռուսաստանի համայնքը չկրկնի լեհահայերի բախտը:

Ինչպես ասվեց, իրոք հակասական մտքեր է առաջացնում այս զրույցը: Գուցե սարսափելի ոչինչ չկա, որ հայերիս մեջ կան զգալի թվով կաթոլիկներ, այդ թվում նաեւ ռուսաց հողում: Ի վերջո սա աղանդ չէ: Բայց եւ մյուս կողմից մտածում ես՝ մեր ինչի՞ն են պետք նման կրոնական տարաձայնությունները: Փոքր ազգ ենք: Վերհիշեցի մի պատմություն: Մի անգամ «խորհրդակցություն» էր Եզրաս սրբազանի մոտ: Հեռավորարեւելյան քաղաքներից մեկից եկած քահանան պատմեց, որ կաթոլիկ մի հայ խնդրել է կնքել որդուն, բայց երբ եկել է նրա տուն, «կաթոլիկ» կինը մեծ սկանդալ է սարքել՝ խափանելով ծիսակատարությունը:

Ջխենթանք, բայց...

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Մոսկվա

Յունամիից եւ հրաբխից հարյուրավոր զոհեր Ինդոնեզիայում

Երեկ հայտնի դարձավ, որ Ինդոնեզիայի ափամերձ շրջաններում ցունամիի հետեւանքով զոհվել են հարյուրավոր մարդիկ, ավելի քան 400 մարդ համարվում էր անհետ կորած: Այդ մասին հաղորդում է Ռոյթեր գործակալությունը:

Եվս 25 մարդ զոհվել է Ճավա կղզում, Ջոկյակարտա քաղաքի մոտակայքում գտնվող Մերապի հրաբխի ժայթքումից: Վնասվածքներ են ստացել 14 անձինք: Հրաբուխը ժայթքել է հոկտեմբերի 26-ի երկրաշարժի հաջորդ օրը: Ժայթքումից ավերվել են Մերապիի լանջին գտնվող բազմաթիվ տներ:

Իշխանությունները հրաբխի խառնարանից 10 կմ շառավղով տարհանել են 11 հազար բնակիչների: 2006-ի հունիսին տեղի ունեցած նախորդ ժայթքումը 2 մարդու մահվան պատճառ էր դարձել: Մերապիի ամենաուժեղ ժայթքումը տեղի էր ունեցել 1930-ին. այն ժամանակ զոհվել էր ավելի քան 1300 մարդ:

Մահացավ Արգենտինայի նախկին նախագահ Նեստոր Կիրշները

Երեկ առավոտյան «ստի խնդիրներից» հիվանդանոցում մահացել է Արգենտինայի նախկին նախագահ, այժմյան նախագահ Քրիստինա Կիրշների ամուսին Նեստոր Կիրշները: Վերջինս երկար ժամանակ արդեն ստից բողոքներ ուներ:

Նշենք, որ Նեստոր Կիրշները 2007-ի հունվարին ընդունեց օրենք «Ապրիլի 24-ը ժողովուրդների միջեւ հանդուրժողականության եւ հարգանքի օր սահմանելու մասին»: Մինչ այդ՝ 2006-ի նոյեմբերին, Արգենտինայի խորհրդարանը ճանաչել եւ դատապարտել էր Հայոց ցեղասպանությունը:

Հ. Ա.

Ֆրանսիայի Սենատը հաստատել է կենսաթոշակային օրինագիծը

Ֆրանսիայի խորհրդարանի վերին պալատը՝ Սենատը, հաստատել է կենսաթոշակային տարիքը 60-ից 62-ի հասցնելու օրինագիծը: Կենսաթոշակային բարեփոխման նախագծի օգտին քվեարկել են 177, դեմ՝ 151 սենատորներ, հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը:

Աշխատանքի նախարար Էրիկ Վյորթը քվեարկությունն անվանել է «պատմական» եւ կառավարությունում բարեփոխման օրինագծի կողմնակիցներին շնորհավորել է հաղթանակի առթիվ: Խորհրդարանում օրինագիծը քննարկվել էր երկու շաբաթից ավելի (ընդամենը 143 ժամ):

Ավելի վաղ օրինագիծը ընդունվել էր խորհրդարանի ստորին պալատում՝ Ազգային ժողովում: Հոկտեմբերի 27-ին այնտեղ պաշտոնապես կրկին համաձայնեցվելուց հետո փաստաթուղթը փոխանցվել է դրա հեղինակին՝ նախագահ Նիկոլա Սարկոզիին, որը իր ստորագրությամբ պետք է վավերացնի նոր օրենքը: Փոփոխությունները ուժի մեջ կմտնեն արդեն նոյեմբերի կեսերին:

Ֆինանսական ճգնաժամի պատճառով կենսաթոշակային տարիքի բարձրացումը Ֆրանսիայում բողոքների ալիք է բարձրացել: Երբ մայիսին ազդարարվեց բարեփոխման սկիզբը, ամբողջ երկրում ծայր առան բողոքի միլիոնանոց ցույցեր, խափանելով մասնավորապես երթեւեկությունը եւ բենզինի մատակարարումները: Արհմիությունները բողոքի հերթական համազգային ձեռնարկումը կանցկացնեն այսօր՝ հոկտեմբերի 28-ին:

Ֆինանսների նախարար Քրիստին Լագարդի գնահատմամբ, գործադուլների հետեւանքով բյուջեի օրական կորուստները կազմում են 200-400 մլն եվրո:

ՎԵՐԱԳԱՐՁ՝ ՈՒՂՂԱԹԻՌՆԵՐՈՎ

«Աֆղանստան վերադառնալով՝ Մոսկվան պահանջներ է ներկայացնում ՆԱՏՕ-ին»

Ռուսաստանը համաձայնել է Աֆղանստան վերադառնալ Արեւմուտքի պետությունների խնդրանքով, որոնք 21 տարի առաջ մոջահեդներին օգնեցին վռնդելու խորհրդային զորքերին: «Մոսկվան աֆղան զինվորականներին եւ ոստիկաններին սովորեցնում է պայքարել թմրամաֆիայի դեմ, ինչպես նաեւ սկզբունքորեն համաձայնել է ՆԱՏՕ-ին ուղղաթիռներ մատակարարել Աֆղանստանում դրանց օգտագործման համար», գրում է Լոնդոնի The Independent թերթը:

Ներկայումս ՆԱՏՕ-ն բանակցում է Ռուսաստանից հավելյալ ուղղաթիռներ ստանալու, ռուսական տարածքով զենք ու զինամթերք Աֆղանստան տեղափոխելու նպատակով, քանի որ Պակիստանով անցնող ճանապարհը դարձել է խիստ վտանգավոր: Բրիտանական թերթի տվյալներով՝ ՆԱՏՕ-ՌԴ արմատապես նոր համաձայնագրի մասին կհայտարարվի նոյեմբերին կայանալիք ՆԱՏՕ-ի գագաթաժողովում:

Այս օգնության դիմաց Մոսկվան որոշ պահանջներ է ներկայացնում ՆԱՏՕ-ին: Այսպես, Բարաք Օբաման արդեն հրաժարվել է Լեհաստանում եւ Չեխիայում հակահրթիռային համակարգի տարրերի տեղաբաշխումից, ՆԱՏՕ-ն համաձայնել է ռուսներին հետ խորհրդակցել այդ տարրերը ըստ նոր ծրագրի տեղաբաշխելու հարցում: «Մոսկվան նաեւ կուզենար, որ ՆԱՏՕ-ն կատարված փաստ համարեր Վրաստանի իրավիճակը, որտեղ պատերազմից հետո ռուսական զորքերը մնում են Հարավային Օսիայում եւ Աբխազիայում», ընդգծում է թերթը:

Ռ. Հ. Սերրի. «ՄԱԿ-ը կպաշտպանի Պաղեստինի անկախության միակողմանի հռչակումը»

Մերձավոր Արեւելքում ՄԱԿ-ի հատուկ համակարգող Ռոբերտ Հ. Սերրին հայտարարել է, որ ՄԱԿ-ը «կպաշտպանի Պաղեստինի անկախության միակողմանի հռչակումը»: Հայտարարությունն արվել է Սերրիի եւ Պաղեստինի վարչապետ Սալամ Ֆայյադի հանդիպման ժամանակ, հաղորդում է «Ջերուսալեմ փոստ» թերթը:

ՄԱԿ-ի ներկայացուցիչը նաեւ պնդել է, որ առկա է միջազգային ընդհանուր համաձայնություն, ըստ որի պաղեստինցիները լիովին պատրաստ են անկախությանը: Սերրիի հաբվարկների համաձայն՝ այդ իրադարձությունը տեղի կունենա 2011-ի օգոստոսին, ՄԱԿ-ի կատարյալ աջակցության պայմաններում:

Անցյալ տարվա վերջերից Պաղեստինյան ինքնավարությունում շատ է խոսվում միակողմանի անկախացման հնարավորության մասին: Նոյեմբերի 10-ին «Ֆաթհ» շարժման կենտկոմի անդամ Մուհամմադ Դահլանը առաջարկել էր, որ Պաղեստինի պետության սահմանները եւ Երուսաղեմի կարգավիճակը որոշվեն ՄԱԿ-ի ԱԽ-ում: Նա ընդգծել էր, որ եթե ԱՄՆ-ը վետո դնի պաղեստինցիների միակողմանի նախաձեռնության վրա, ապա կապացուցի, որ շահագրգռված չէ Մերձավոր Արեւելքի խաղաղությամբ:

Պաղեստինի անկախության ճանաչմանը ոչ թե Իսրայելի հետ վարվող բանակցություններում, այլ ՄԱԿ-ի ԱԽ-ում հասնելու մտադրությունը անցյալ շաբաթավերջին հաստատել է բանակցություններում պաղեստինցիների խմբի ղեկավար Սաիբ Արիկաթը: Նա ընդգծել է, որ Պաղեստինի պետությունը ճանաչելուց ԱՄՆ-ի հրաժարումը «ձեռնտու կլինի «Համասին»»:

«Թույլ չենք տա օգտագործել մեր տարածքը Իրանին հարվածելու համար»

«Քաթարի իշխանությունները թույլ չեն տա, որ Իրանին հարվածելու համար օգտագործվեն Քաթարում տեղակայված ամերիկյան ռազմաբազաները», բրիտանական «Financial Times»-ին տված հարցազրույցում նշել է Քաթարի էմիր Ահմադ իբն Խալիֆան: Քաթարի էմիրը կոչ է արել ԱՄՆ-ին շարունակելու միջուկային ծրագրի շուրջը Իրանի հետ բանակցությունները եւ գտնելու խնդրի խաղաղ, դիվանագիտական լուծումը, քանի որ Իրանի նկատմամբ կիրառվող միջազգային պատժամիջոցները խնդրի լուծման համար արդյունավետ լինել չեն կարող: Անդրադառնալով տարածաշրջանում խաղաղության հարցին՝ Ահմադ իբն Խալիֆան ընդգծել է, որ եթե նախկինում հարցը դրվում էր «անհրաժե՞շտ է արդյոք խաղաղություն, թե՞ ոչ» ձեւով, ապա այժմ այդ հարցը հնչում է. «Ինչպես հասնել խաղաղության, ցանկանո՞ւմ ենք համագործակցել Իրանի հետ, թե՞ ոչ» տարբերակով: Քաթարի էմիրն ընդգծել է, որ իր երկիրն ազատ է որոշումներ կայացնելու մեջ, իսկ այդ որոշումները պայմանավորված են ինչպես սեփական, այնպես էլ տարածաշրջանային շահերին համապատասխան:

Լ. Մ.

20-րդ հարկից ընկած չինացին ողջ մնաց

Չինաստանի Գույյան քաղաքում (Գույչժոուի նահանգ) 20-րդ հարկից ընկած 10-ամյա տղան ողջ է մնացել: Այդ մասին հաղորդում է Սինհուա գործակալությունը:

Բնակարանի բաց լուսամուտից երեխան ընկել է՝ գլխով բախվելով ներքեւում կայանված ավտոմեքենայի հետեւի ապակուն: Նրան փրկել է մեքենայի սրահում թողած բարձը:

Երեխային տարել են հիվանդանոց: Բժիշկների խոսքերով, որեւէ կոտրվածք չի հայտնաբերվել: Ընկնելիս տղան ստացել է արնազեղում, որը նրա կյանքին չի սպառնում:

Դիտարկման տեսախցիկները վկայում են, որ երեխան ինքն է ընկել բացված լուսամուտից: Միջադեպի կապակցությամբ սկսվել է քննություն, սակայն ոստիկանությունում վստահ են, որ խոսքը դժբախտ պատահարի մասին է:

Շենքի տերերը լրագրողներին հավաստիացրել են, որ անվտանգության բազրիքներ կտեղադրվեն՝ ապագայում նման միջադեպեր թույլ չտալու համար:

Սեպտեմբերին Նյու Յորքում տեղի էր ունեցել համանման միջադեպ: 22-ամյա Թոմաս Մեյգիլը ողջ էր մնացել 40-րդ հարկից ընկնելուց հետո: Նա եւս ընկել էր տան մոտ կանգնեցված ավտոմեքենայի վրա, փրկել հետեւի ապակին եւ վայրէջք կատարել հետեւի նստարանի վրա: 2007-ի դեկտեմբերին Նյու Յորքում պատուհան լվացող Ալսիդես Մորենոն աշխատանքային սայլակից ընկել էր շենքի 47-րդ հարկից եւ նույնպես ողջ էր մնացել:

Մատենադարանի բանաստեղծը

Մատենադարանի տնօրեն, հրատարակիչ եւ բանաստեղծ **Հրաչյա Թամրազյանի** նկարագիրը հաճախ զուգորդվում է ակադեմիական գերազանցության հետ: Նրա պոեզիան հարատեւորեն փորձում է անխզելի կապ ստեղծել անցյալի եւ ապագայի միջեւ: Դա այնպիսի պոեզիա է, որը Հայաստանի հողի վրա թե տարագրության մեջ հանդես է գալիս որպես մեր գոյության երաշխավոր: Երեւանի Մատենադարանում ես տնօրենի աշխատասենյակում ուշադիր լսում եմ նրա խոսքը, ծանոթանում նրա հակասական ներաշխարհին:

Կանաչը նրա պրպտուն աչքերի գույնն է: Դա նաեւ նրա ներաշխարհի անտառների գույնն է. Մակարավանքը Հայաստանի հյուսիս-արեւելքում է, Ի-ջեւանից ոչ հեռու:

Անորոշության եւ տագնապների ներկա ժամանակներում վստահելի գրվածքներ փնտրելը, ճշմարտաբույր գրականությամբ սնվելը իսկական մարտահրավեր է: Ինչպես սփյուռքում, դա յուրահատուկ ձեւ է հաղթահարելու մեկուսացման վիճակը, որն ազդում է լեզվի վրա: Վերջինս տառապում է իրականության բարդությունը եւ հակասությունները նկարագրելու անկարողությունից: Եվ այդուհանդերձ հարկավոր է ապրեցնել այդ լեզուն, որը նկարագրում է մասնատված ժողովրդի ներաշխարհը:

Հրաչյա Թամրազյանի բանաստեղծությունները շոյանքներ են, որոնք գոտեմարտում են կողմնորոշիչները կորցրած հոգիներին: Դրանք զեփյուռ են, նոր շունչ, այսօր եւս գոյատեւող հին ժամանակների արձագանք:

Գրիգոր Նարեկացին՝ ներշնչանքի անսպառ աղբյուր

Մեր գրականության մեջ տեսանելիության չափից անկախ, Նարեկացին ազդել է բազմաթիվ բանաստեղծների վրա: Օրինակ բերեմ Սիամանթոյին, Տերյանին, Չարենցին կամ Պարույր Սեւակի «Եղիցի լույս» ժողովածուն: Նրանք բոլորը լուսավորվել են Նարեկացու միստիկայի, նրա երկի շնչով, որը ընդունում է հավերժության ճշմարտացիությունը: Ես համոզված եմ, որ մենք շղթայի այն օղակն ենք, որը կապում է անցյալն ու ապագան. Նարեկացին մեզ միջոցներ տալիս ինքնակառուցվելու անցյալից չհրաժարվելով առաջ գնալուց մեր գրականությունը մշտապես նորացնելու համար:

Գրիգոր Նարեկացու երկերում նեոպլատոնականության գերակշռող տեղը Դիոնիսոսի ուսմունքի ուղղակի արձագանքն է: Նարեկացին ստեղծում է մի հիմք, որի վրա կառուցվում է մի քրիստոնեական աստվածաբանություն, աճում է մեր հավատքի միստիկան, ինչպես նաեւ մեր ստեղծագործական ունակության բոցը:

Ես ընդհատում եմ նրան.

- Այդուհանդերձ սփյուռքում նա պախարակվել է: Հիշեցեք Շահնուրի «Նահանջը առանց երգի» ստեղծագործության կերպար Սուրենին:

- Դա ճիշտ է, բայց նա կարողացե՞լ էր արդյոք ըմբռնել Նարեկացու մեծությունը, հետազոտություն կատարել մեկ ուրիշ տեսանկյունից: Ժամանակակից բանաստեղծը պարտավոր է սեփական ներաշխարհի որոնումներում հետեւել այդ ավանդույթին. խոսքը ճշմարիտ հոգեւորի, վեհության որոնման մասին է: Այսօրվա հայ բանաստեղծը պարտավոր է տոգորվել մեր առասպելներով, մեր միջնադարյան առակներով. բանաստեղծական որոնումների այդ ոլորտը մեզ թույլ է տալիս ավանդույթ վերստեղծել մեր ժառանգության հիման վրա:

Արդի պոեզիայից համապատկեր. ստեղծագործական ուժի ճգնաժամ

Անկախացմանը հաջորդած խավար տարիները միահյուսվում են բացարձակ ճգնաժամի ոգով: Այդ քաոսի պայմաններում գրական ասպարեզում հայտնվում է այսպես կոչված «ավանգարդային» բանաստեղծների մի նոր սերունդ: «Ավանդույթը նրանցով խզվեց: Մերօրյա տեքստերի մեծամասնությունը լոկ արտաքին փայլ է. պակասում են հոգին, մետաֆիզիկական խորությունը», հառաչում է Հրաչյա Թամրազյանը:

- Ինչ եք ակնկալում արդի հայ բանաստեղծից եւ նրա դերից:

- Ես ակնկալում եմ, որ նա հետազոտի մի հոգեւոր կածան, գտնի մարդու ցավերի, հասարակության խնդիրների լուծումը, պատասխանը: Բանաստեղծի դերն է ձեռնարկել մետաֆիզիկական որոնում, թափանցել մարդու բարդ էության խորքը: Պոեզիան պարտավոր է գտնել մեր հարցումների պատասխանները, հարթել նոր ուղիներ: Այսօր մենք հեռու ենք դրանից: Ստեղծագործական աշխատանքը շատ մակերեսային է: Պարզեւատրում ենք երեւութականությունը, բայց չկա իսկական ստեղծագործություն:

Հրաչյա Թամրազյանի կարծիքով, Հայաստանի արդի պոեզիան դժվարությամբ է շնչում, աչքաթող է անում գլխավորը: Դա առաջ նետվող մի խառնածին գրվածք է, որն անտեսում է մարդու մետաֆիզիկական որոնումը: Առկախ է մնում մի հարց. արդյոք սա ստեղծագործական ունակությա՞ն ճգնաժամ է, թե՞ մեկենասության ճգնաժամ, որը կասեցնում է մշակույթի ծաղկումը: Թամրազյանը կարեւորում է առաջինը:

Այսօրվա պոեզիան այնքան մակերեսային է, որ լրջորեն չի ընդունվում, քանզի ճաք, չեղվածք է առաջացնում մեր հոգեւոր աշխարհի եւ նյութական աշխարհի միջեւ: Գրելիս հարկավոր է մտածել, որ ինչ-որ մեկը լսում է մեզ, որ կա արձագանք, որ մեր խոսքը անխուսափելիորեն մեզ է վերադարձվում:

Իր խաչի վրա տառապող ժողովուրդ

Ինչպե՞ս վերաբերվել այստեղի եւ այնտեղի տառապանքին: Բանաստեղծը լիովին գիտակցում է Սփյուռքի մասնատումը: Նրան նաեւ հայտնի է, թե որքան դժվար է ստեղծել հիշատակի ճնշող բեռից զերծ մշակույթ: Ասում են, մասնատում գոյություն ունի նաեւ Հայաստանում: Ցավատանջ Հայաստան, որը պայքարում է օտարամոլության եւ ապագայի հետ կապված երկյուղների դեմ: Հրաչյա Թամրազյանը մերժում է Հայաստանի եւ Սփյուռքի միջեւ ճեղքվածքի գոյության պնդումները, ընդունելով ամենօրյա փոխլրացման փորձը: «Մեր մշակույթը մեզ փրկել է մահից, բայց մենք կարող ենք այն սպանել, եթե համարենք քարացած գործիք: Շատերը այն համարում եմ (մանավանդ Սփյուռքում) երազային անցյալի փառաբանման միջոց, բայց շատ արագ մոռանում են մեր միջնադարյան ավանդույթի վիթխարի ներդրումը, ավանդույթ, որը մեր հավատքի ու հարատեւության երաշխավորն է: Եթե որպես օրինակ վերցնենք միջնադարյան խաչքարերը, ակնհայտ է, որ դրանք միանգամայն տարբեր են այսօրվաններից: Այլ կերպ ասած. սիմետրիան հակադրում է կյանքի մշակույթը եւ մահվան մշակույթը»:

Հայ գրքի հրատարակություն եւ տարածում

«Նաիրի» հրատարակչության ղեկավար Հրաչյա Թամրազյանի կարծիքով, գրքի թողարկումը անկում է ապրում, մասնավորապես՝ պետության անբավարար օժանդակության պատճառով:

Անհնար է հրաշքներ գործել. տպաքանակը շատ փոքր է, տարածումը գրեթե զրոյական է, շուկան՝ աննշան: Անկախությանը հաջորդած մասնավորեցումներից հետո շուկան փլուզվեց: Խորհրդային ժամանակաշրջանում մենք Երեւանում ունեինք վեց տասնյակ գրախանութ, այսօր մնում է հազիվ մեկ տասնյակ: Ամեն տարի լույս են տեսնում որակյալ գրքեր, բայց ինչ գնով... Դասախոսները եւ ուսանողները չեն կարողանում ձեռք բերել իրենց համար նախատեսված աշխատությունները:

Հայաստանում չկա գրքի քաղաքականություն, ինչպես Ֆրանսիայում, որտեղ կան գրքի ազգային կենտրոն եւ մշակույթի նախարարության օժանդակություն, իսկ գրական աշնան սկիզբը նշանավորվում է 700-ից ավելի վերտերով: Թամրազյանը խոստովանում է, որ նույնիսկ Հայաստանի փոքր մասշտաբներով չի հաջողվում կիրառել համանման նախաձեռնություններ:

«Երկու տարի հետո ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանավորությամբ սկսվելու է «Երեւանը գրքի համաշխարհային մայրաքաղաք» միջոցառումը: Պետության եւ մասնավոր կազմակերպությունների օժանդակության բացակայության պայմաններում կբավարարվենք շքեղ աշխատություններ-ի, գեղեցիկ գրքերի վերահրապարակմամբ, սակայն գիրքը որպես այդպիսին ավելի մաքքելի չի դառնա ընթերցողին», շարունակում է Հրաչյա Թամրազյանը:

Ճառ ի նպաստ սթափության

«Ավելի քան երբեւէ անհրաժեշտ է մեր մշակույթին վերադարձնել իր գրավչությունը», ասում է Մատենադարանի տնօրենը: Անշուշտ, դա յուրովի թույլ կտա հաղթահարել հայ հասարակության մեջ առկա օտարամոլությունը:

Մեր ժողովուրդը պետք է սնվի իր գանձերից, գտնի իր ուղին՝ զինված լուսավորիչ հոգեւոր էներգիայով: Մինչդեռ առկա է կեղծ մասունքների երկրպագության ցավալի միտում: Մենք պետք է ընդվզենք մեր մշակույթի առաջընթացը կասեցնող կույր պաշտամունքների դեմ:

Հրաչյա Թամրազյանը հորդորում է ձերբազատվել նորմատիվային շղթաներից, շլացուցիչ ոսկե հորթից, ներկան նրան չի սարսափեցնում: Նա մեզ առաջարկում է ճեղքվածքը լցնել մեր ստեղծարար գործունեությամբ, որը մեր հոգեւոր հնարավորությունների արգասիքն է:

- Ես միշտ փորձում եմ շեշտը դնել մշակութային խնդիրների ոչ թե ընդհանրական, այլ անհատական մոտեցման վրա: Դա ինձ օգնում է հաղթահարել համահարթեցումը՝ հանուն ընդհանուր շահերի: Կարեւորում եմ Սփյուռքի եւ Հայաստանի արվեստագետների անհատական կաղերը: Այդ գործակցությունը պետք է դուրս գա մշակութային այնպիսի կազմակերպությունների շրջանակներից, որոնցից է գրողների միությունը՝ անցած ժամանակաշրջանի մնացուկներից մեկը: Այդ կառույցները շնչահեղձ են անում գրողին: Գրչակիցների շրջանում ճանաչվելու համար գրողը կարիք չունի ցուցադրելու իր ստեղծագործությունը: Եթե այդ հնամոլությանը վերջ դնենք, մեր երկիրը կառաջադիմի:

Այս խոսքերով Հրաչյա Թամրազյանն ուզում է նորացնել բանաստեղծի եւ նրա իրականության դաշինքը, որը պետք է նշվի ամեն օր: Ժամանակն է հրաժեշտ տալ մեր բարեկամին: Բայց ինչպե՞ս հրաժեշտ տաս արգասավոր մտախոհությանը: Ուրախության եւ թախծի միախառնված զգացում միեւնույն ժպիտով, ինչպես նաեւ նոր հանդիպման խոստում...

ՏԻԳՐԱՆ ԵԿԱՎՅԱՆ
Երեւան-Քարիզ
Քրանս. թարգ. Պ. Ք.

ՁՈ ԿՈԿԵՐԻ ՀԱՄԵՐԳԸ

Պրոֆեսիոնալիզմ

Նրանք, ովքեր չորեքշաբթի երեկո Մարզահամերգային համալիրում բախտ ունեցան վայելելու Ձո Կոկերի համերգը, կարող են ինձ հետ վկայել, որ ամենից աչքառու բանը երգչի պրոֆեսիոնալիզմն էր: Շուրջ 50 տարի ռոքի եւ բլյուզի ասպարեզում հանդես եկող աշխարհահռչակ արվեստագետն այդ գիշեր կրկին ու նորից փայլեց իր կատարողական վարպետությամբ, այսինքն՝ պրոֆեսիոնալիզմով: Ուրիշ ոչ մի բանով չի կարելի բացատրել այդ տարիքում (66) եւ նման ժանրում շուրջ մեկուկես ժամ առանց ընդմիջման եւ սկզբից մինչեւ վերջ նույն ուժգնությամբ եւ զգացմունքայնությամբ նրա 20 կատարումները: Նրա բոլոր ստեղծագործությունները չէ, որ ծանոթ էին հսկա դահլիճում հավաքված բազմությանը, բայց երգչին հաջողվեց ունկնդրին անընդհատ պահել իր «ափի» մեջ եւ հետզհետե, հատկապես «You Are So Beautiful» երգից հետո ուժգնացել եւ մինչեւ վերջ պահել զգացմունքային ալիքը: Դա դաս էր նաեւ մեզանից:

Մինչդեռ, համերգից առաջ ես էլ, ինչպես ինձ նման թերեւս շատերը, մտածում էի, որ Հայաստան է հրավիրվել հերթական «ժամանցված» նախկին «աշխարհահռչակը», որը զրկվել է հետաքրքրական ու շահավետ այլ հրավերներից: Ընդհակառակը, Ձո Կոկերն ապացուցեց, որ խնամքով է մոտենում իր յուրաքանչյուր ելույթին, նույնիսկ իր համար անծանոթ երկրի անծանոթ արվեստասերների առաջ: Դա նույնպես փաստ է պրոֆեսիոնալիզմի: Մանավանդ որ երգիչը շողոքորթ ոչ մի բառ չարտասանեց անծանոթ հանդիսատես-ունկնդիրներին շոյելու, գրավելու համար, ինչպես անում են շատերը: Միայն ամենավերջում՝ խոստում՝ նորից հանդիպելու:

Անշուշտ: Եթե մաքքելի լինեն տոմսի գները, թեեւ մեծ էին նաեւ համերգի կազմակերպիչների տված հրավիրատոմսերի քանակը:

Իսկապես, «Ամերիաբանկի» կողմից անմոռանալի նվեր էր այս համերգը երեւանյան հասարակությանը: «Ամերիաբանկն» իր 100-ամյակի առթիվ խոստանում է հետագա նոր անակնկալներ: Սպասում ենք:

Յ. Ա.

ՀԱՄԵՐԳԱՍՐԱՀ

Հոգեւոր երաժշտության երեկո՝ նվիրված Ռաֆայել Պապայանի հիշատակին

Կոմիտասի անվան Կամերային երաժշտության տանը այսօր ժամը 19.00-ին Հոգեւոր երաժշտության կենտրոնը ներկայացնելու է Հոգեւոր երաժշտության երեկո՝ նվիրված Ռաֆայել Պապայանի հիշատակին: Առաջին անգամ Հայաստանում կատարվելու են Հինգ սոնատ 17-րդ դարի ավստրիացի կոմպոզիտոր Բիբերի «Տասնհինգ միստերիա Ս. Մարիամ Աստվածածնի կյանքից» ստեղծագործությունից: Կհնչեն նաեւ հայ հոգեւոր երգեր նվիրված Ս. Աստվածածնին՝ «Խնկի ծառի նման ես», «Ո՞ւր ես, մայր իմ», «Վարանիմ ի մեղաց» (Բազմաձայնումը՝ Դանիել Երաժշտի), մենակատարներ՝ Անահիտ Պապայան, Գոհար Դանիելյան, Ֆելիքս Հարությունյան: Նվագակցում են՝ Թերեզա Ոսկանյանը, Սուսաննա Մուրադյանը, Դավիթ Գրիգորյանը:

Համերգային ծրագիրը կուղեկցվի «Շարական» անսամբլի գեղարվեստական ղեկավար եւ դիրիժոր Դանիել Երաժշտի բանախոսությամբ:

Մ. Ք.

Գրական երեկո Գլենդեյլում

Գլենդեյլի Հայ կաթողիկե առաջնորդարանի սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու սրահում վերջերս գրական երեկո էր կազմակերպվել: Այս մասին տեղեկացանք Կալիֆոռնիայի հայ գրողների միությունից (ԿՀԳՄ): Բանաստեղծ Գրիշ Դավթյանը, որը նաեւ ԿՀԳՄ-ի նախագահն է, երեկոյի ժամանակ հայտնել է, որ հրապարակագիր Հրանտ Սիմոնյանը 1000 դոլար է նվիրում ԿՀԳՄ-ին՝ Հրանտ եւ Մանուշ Սիմոնյանների գրական մրցանակին հատկացնելու համար: Երեկոյի ընթացքում նաեւ տեղի է ունեցել արձակագիր Խորեն Արամունու «Խրամատից դուրս» վեպի շնորհանդեսը: Գրական երեկույթը համեմված է եղել երաժշտական կատարումներով:

Ի. Պ.

ԱԶԳ **Սպորտկան**

Սամվել Տեր-Սահակյանը շարունակեց հաղթարշավը

Հունասանում ընթացող շախմատի աշխարհի պատանեկան առաջնությունում հաղթարշավն է շարունակում վանաձորցի գրոսմայստեր Սամվել Տեր-Սահակյանը: Մինչեւ 18 տարեկաններեի Եվրոպայի անցյալ տարվա չեմպիոնն ու այս տարվա փոխչեմպիոնն առայժմ հիանալի է հանդես գալիս եւ լավ հնարավորություն ունի նվաճելու նաեւ աշխարհի չեմպիոնի տիտղոսը:

7-րդ տուրում Սամվելը նոր հաղթանակ տոնեց իրեն հետաքրքրող ՖԻԴԵ-ի վարպետ Անգել Արիբաս Լոպեսի նկատմամբ ու վաստակեց 6,5 միավոր: Մրցաշարի ավարտից 4 տուր առաջ հայ շախմատիստը մեկ միավորով առաջ է անցել մոտակա մրցակիցներ Սթիվեն Ջիերկից, Ստեֆան Մազուրից եւ Տալ Բարոնից: Ջիերկը ոչ-ոքի խաղաց Ալվար Ալոնսոյի հետ, Բարոնը հաղթեց Սեսուրամանին, Մազուրն էլ պարտության մատնեց Յիլմազին: Մինչեւ 18 տարեկաններեի մրցաշարի մասնակից Գրիգոր Դիլանյանը հաշտություն կնքեց Քրիստիան Կրուզի հետ: Դիլանյանը 4,5 միավորով 25-րդ տեղում է:

Սամվել Տեր-Սահակյանից հետո հայ շախմատիստներից 2-րդ արդյունքն ունի մինչեւ 12 տարեկաններեի մրցաշարում հանդես եկող Մանուել Պետրոսյանը: Նա հաշտություն կնքեց Քեմիլ Ալի Մարանդիի հետ եւ 5,5 միավորով ընթանում է 6-րդ տեղում: Առաջատարն ամերիկացի Կայդեն Տրոֆն է, որն ունի 6,5 միավոր: Նա հաղթեց Կրժիշտոֆ Դուդային:

Առաջատարից կես միավորով է հետ մնում թուրք Վահաղ Սանալը, որը հաղթեց Դիմիթրյան Ղոշին: Տարիքային այս խմբում հանդես եկող Միքայել Մկրտչյանը, Գոռ Ալեքսանյանը եւ Հրանտ Ալեքսանյանը վաստակել են 4-ական միավոր: 3,5 միավոր ունի Կարեն Կարապետյանը:

Մինչեւ 16 տարեկաններեի մրցաշարում Հովհաննես Գաբուզյանը 5 միավորով 10-րդ տեղում է: 7-րդ տուրում նա հաղթեց Մարչելո Վիլալբային: Առաջատարը 6,5 միավոր վաստակած լեհ շախմատիստ Քամիլ Դրագունն է: Նրան կես միավոր է զիջում իր հայրենակից Մարչին Կրժիժանովսկին:

Մինչեւ 14 տարեկաններեի մրցաշարում Տիգրան Հարությունյանը 4,5 միավորով 21-րդ տեղում է: 7-րդ տուրում նա անդրանիկ պարտությունը կրեց՝ զիջելով Կիրիլ Ալեքսեենկոյին: Տարիքային այս խմբում պարզապես գերազանց ելույթ է ունենում լիտվացի Թոմաս Լաուրուսասը, որը հաղթել է բոլոր 7 պարտիաներում: Նա առդեն 1,5 միավորով առաջ է անցել իր մոտակա հետաքրքրողներից:

Հայ շախմատիստուհիներից լավագույն արդյունքն ունեն Սուսաննա Գաբոյանը եւ Մարիա Գեւորգյանը, որոնք վաստակել են 4,5-ական միավոր: Մինչեւ 14 տարեկաններեի մրցաշարում Սուսաննան պարտվեց Ֆիլիզ Օսմանոդիային: Տուրն անհաջող էր նաեւ Մարիայի համար, որը պարտություն կրեց Մարիա Լեկսից:

ՈՒԵՖԱ-ն զրպարտանք չի հանդուրժում

Համաշխարհային ֆուտբոլում նոր սկանդալ է հասունանում: Գերմանական Süddeutsche Zeitung-ը հրապարակել էր Կիպրոսի ֆուտբոլի ֆեդերացիայի գործկոմի նախկին անդամ Սպիրոս Մարանգոսի հայտարարությունը, որով տեղեկացնում էր, որ Եվրո-2012-ի կազմակերպիչներն ընտրություններեի ժամանակ 11 մլն եվրոյով հօգուտ իրենց են գնել ՈՒԵՖԱ-ի 5 անդամների ձայները: Ըստ Մարանգոսի, ինքն ունի համապատասխան փաստեր ու ապացույցներ եւ պատրաստ է դրանք ներկայացնել ՈՒԵՖԱ, սակայն վերջինս ոչ մի կերպ չի ցանկանում արձագանքել տեղի ունեցածին:

«ՈՒԵՖԱ-ում ոչ բոլորն են շահագրգռված գործի բացահայտմամբ: Ամռանը պայմանավորվել էի ՈՒԵՖԱ-ի կարգապահական կոմիտեի ղեկավար Պիտեր Լիհամերի հետ, սակայն վերջինս հանկարծակի հանդիպումը չեղյալ համարեց, պատճառաբանելով, որ ղեկավարությունն է այդպես ցանկանում: Եվ միայն հետագայում Պիտերը խնդրեց ինձ իրեն ուղարկել գործի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը», նշել է Սպիրոս Մարանգոսը:

Բնականաբար, ՈՒԵՖԱ-ն չէր կարող անտարբեր մնալ իր հասցեին հնչած մեղադրանքներին եւ անմիջապես պահանջել էր Մարանգոսից ապացույցներ ներկայացնել, հակառակ դեպքում նրա հանդեպ հնարավոր է, որ դասական հայց ներկայացվի: Բայց այդպես էլ Մարանգոսը ոչինչ չներկայացրեց՝ հրաժարվելով նաեւ հանդիպել ՈՒԵՖԱ-ի ներկայացուցիչների հետ:

ՈՒԵՖԱ-ն հանդես է եկել պաշտոնական հայտարարությամբ, որում մասնավորապես նշվում է. «ՈՒԵՖԱ-ն հիշեցնում է, որ եվրոպական ֆուտբոլի միասնականության պաշտպանության նպատակով պատրաստ է եւ ցանկանում է բացահայտել անօրինականությունների եւ կոռուպցիայի դեպքերը: Սակայն դրա համար հարկավոր են հիմնավոր ապացույցներ, այլ ոչ թե դատարկ խոսքեր, որոնք կարող են զրպարտանք լինել: ՈՒԵՖԱ-ն պահանջում է Մարանգոսի դեմ քրեական գործ հարուցել, գտնելով, որ դա նրանից որեւէ ապացույց ստանալու միակ միջոցն է»:

Նշենք, որ Կիպրոսի ֆուտբոլի ֆեդերացիայի գործկոմի անդամությունից զրկվելուց հետո Մարանգոսը մեղադրել էր ֆեդերացիային խաղարկության արդյունքները խեղաթյուրելու մեջ: Սակայն հետաքննությունը պարզել էր, որ խաղարկության ժամանակ ոչ մի խախտում չէր կատարվել:

Հիշեցնենք, որ ֆուտբոլի Եվրոպայի 2012-ի առաջնության անցկացման վայրն ընտրվել էր 2007-ին Կարդիֆում կայացած ՈՒԵՖԱ-ի նստաշրջանում: Ուկրաինայի եւ Լեհաստանի համատեղ հայտը 8 ձայն էր ստացել, Իտալիայի օգտին տրվել էր 4 ձայն:

Դոհան հյուրընկալել է թենիսիստուհիներին

Դոհայում մեկնարկել է կանանց թենիսի աշխարհի ոչ պաշտոնական առաջնությունը: 8 ուժեղագույն թենիսիստուհիները նախնական փուլում բաժանվել են 2 խմբի: «Սպիտակ» խմբում հանդես են գալիս ռուսաստանցի Վերա Զվոնարյովան, բելգիացի Կիմ Կլիյստերսը, սերբ Ելենա Յանկովիչն ու բելառուս Վիկտորիա Ազարենկոն:

«Կարմիր» խմբում գլխավոր մրցանակի համար պայքարում են ռուսաստանցի Ելենա Դեմենտեւան, դանիացի Կարոլին Վոզնյացկին, ավստրալացի Սամանտա Ստոսուրը եւ իտալացի Ֆրանչեսկա Սկյավոնեն:

«Սպիտակ» խմբում Վերա Զվոնարյովան հաղթանակով սկսեց մրցաշարը՝ 6-3, 6-0 հաշվով հաղթելով Ելենա Յանկովիչին:

«Կարմիր» խմբում Կարոլին Վոզնյացկին մեծ առավելության հասավ Ելենա Դեմենտեւայի նկատմամբ (6-1, 6-1), իսկ Սամանտա Ստոսուրը պարտության մատնեց Ֆրանչեսկա Սկյավոնեին (6-4, 6-4):

Խաղը կսկսվի ժամը 18-ին

Ֆուտբոլի Հայաստանի ֆեդերացիայի մրցումների կազմակերպման եւ անցկացման բաժինը փոփոխել է հոկտեմբերի 31-ին «Հանրապետական» մարզադաշտում կայանալիք «Փյունիկ»-«Բանանց» հանդիպման ժամը: Այն կսկսվի ժամը 18-ին: Հիշեցնենք, որ «Բանանցը» 2 միավորով գերազանցում է «Փյունիկին» եւ այդ վճռորոշ խաղում հաղթելու դեպքում գործնականում կլուծի չեմպիոնության հարցը: Իսկ ահա «Փյունիկի» հաղթանակի դեպքում չեմպիոնի տիտղոսը պահպանելու թիմի հնարավորությունը զգալիորեն կածի:

Հաղթական մեկնարկ

Դավիթ Նալբանդյանը հաղթանակով մեկնարկեց ֆրանսիական Մոնպելիե քաղաքում անցկացվող թենիսի մրցաշարում: Առաջին փուլում արգենտինահայ թենիսիստը 6-4, 6-4 հաշվով պարտության մատնեց իսպանացի Գրանոլիերսին:

ԲԱՍԿԵՏԲՈԼ

Մեկնարկում «Հաշիսը» պարտություն կրեց

Երեւանի «Հաշիսը» պարտությամբ սկսեց բասկետբոլի Եվրոպայի գավաթի հերթական խաղարկությունը՝ Նովոսիբիրսկում 50-79 հաշվով զիջելով տեղի «ԴԻՆԱՄՈ-ԳՈՒՎԴ-ին»: Դաշտի տերերը հենց խաղասկզբից հաշվի մեջ առաջ անցնելով, աստիճանաբար մեծացրին առավելությունը՝ հաջողության հասնելու ոչ մի հնարավորություն չընձեռելով «Հաշիսին»:

Առաջին խաղափուլն ավարտվեց նովոսիբիրսկցիների 12 միավորի առավելությամբ (21-9): Երկրորդ խաղափուլից հետո հաշվի տարբերությունը հասավ 18-ի՝ 36-18: 3-րդ խաղափուլից հետո դաշտի տերերը եւս 2 միավորով մեծացրին հաշվի տարբերությունը (57-37):

Նշենք, որ եթե «Հաշիսի» կազմում ընդամենը 5 հոգու հաջողվեց միավորներ վաստակել, ապա դաշտի տերերի կազմում արդյունավետությամբ աչքի ընկան 10 բասկետբոլիստուհիներ: «Հաշիսից» ամենաարդյունավետն Ամանդա Ջեֆսոնն էր (15 միավոր): 12 միավոր վաստակեց Քուիանանա Ջենին, 11-ական՝ Աննա Պոկոյովան ու Էրիկա Դեւիսը: Կաելա Ջափդելայնն էլ ընդամենը մեկ միավոր պարգեւեց իր թիմին:

Դաշտի տերերից արդյունավետ նետումներով աչքի ընկան Անա Դաբովիչը (15 միավոր), Անաստասիա Շիլովան (13), Նատալյա Մյասոեդովան (12) եւ Տատյանա Պետրուշինան (10):

2-րդ հանդիպումը «Հաշիսը» կանցկացնի նոյեմբերի 4-ին՝ «Միկա» մարզադահլիճում հյուրընկալելով Իսրայելի «Էլիտզուրին»:

Ղարամյանին չհաջողվեց մտնել հաջորդ փուլ

Ֆրանսիական Կաղ դ'Ազդ քաղաքում անցկացվող արագ շախմատի մրցաշարի առաջին փուլն ավարտվեց: Դրա արդյունքներով երկու ենթախմբերի չորս լավագույն շախմատիստներն իրավունք ստացան պայքարը շարունակելու 2-րդ փուլում, որն անցկացվելու է նոկաուտ համակարգով:

Ցավոք, ֆրանսիահայ Տիգրան Ղարամյանին չհաջողվեց Բ ենթախմբում տեղ զբաղեցնել առաջատար քառյակում: 6-րդ տուրում

Տիգրանը սեւերով զիջեց Յանիկ Պելետիեին, իսկ ավարտական պարտիան Վասիլի Իվանչուկի հետ ավարտեց ոչ-ոքի: Այսպիսով, Ղարամյանը 7 հնարավորից վաստակեց 3 միավոր եւ Բ ենթախմբում գրավեց 5-րդ տեղը: Հաղթող ճանաչվեց Վասիլի Իվանչուկը (5,5 միավոր), որը 6-րդ տուրում հաղթել էր Տատյանա Կոսինցեւային: Նույնքան միավորով 2-րդ տեղը զբաղեցրեց վիետնամցի Լե Կուանգ Լյեմը, որը նախ հաշտություն կնքեց Ջժու Ջենի հետ, ապա հաղթեց Կատերինա Լահնոյին: Քառորդ եզրափակիչ դուրս եկան նաեւ 4-ական միավոր վաստակած Յանիկ Պելետիեն եւ Յոն Լյուդվիգ Համերը:

Ա ենթախմբում լավագույն արդյունքը ցույց տվեց ճապոնացի գրոսմայստեր Հիկարու Նակամուրան, որը վաստակեց 6,5 միավոր: Նրա հաղթարշավը 6-րդ տուրում հաջողվեց կասեցնել չինացի Բու Քսյանջիին՝ ոչ-ոքի ավարտելով պարտիան: Իսկ 7-րդ տուրում Նակամուրան իր 6-րդ հաղթանակը տոնեց Նադեժդա Կոսինցեւայի հետ մրցախաղում:

5,5 միավորով 2-րդ տեղը գրավեց Բու Քսյանջին, որը 7-րդ տուրում հաշտություն կնքեց Ռոման Էդուարդի հետ: Պայքարը կշարունակեն նաեւ վիետնամցի Նգուեն Նգոկ Չուոնգ Շոնը (4 միավոր) եւ հունգարուհի Հուդիթ Պոլգարը (3,5):

Եվ այսպես, որոշվեցին քառորդ եզրափակիչի զույգերը: Այս փուլում այսօր Ա ենթախմբի հաղթող Հիկարու Նակամուրան կմրցի Բ ենթախմբում 4-րդ տեղը գրաված Յոն Լյուդվիգ Համերի հետ: Ա ենթախմբում 2-րդը ճանաչված Բու Քսյանջիի մրցակիցը կլինի Բ ենթախմբում 3-րդ տեղը գրաված Յանիկ Պելետիեն:

Նույն սկզբունքով հոկտեմբերի 29-ին զույգեր կկազմեն Նգուեն Նգոկ Չուոնգ Շոնը եւ Լե Կուանգ Լյեմը, Հուդիթ Պոլգարն ու Վասիլի Իվանչուկը: Այս փուլում մրցակիցները միմյանց հետ 2 անգամ կհանդիպեն: Հավասար արդյունքի դեպքում կանցկացվի լրացուցիչ մրցախաղ:

Առջեւում Կառլսենն է

Չինաստանի Նանցզին քաղաքում ընթացող շախմատի «Մեծ սաղավարտի» մրցաշարում սկսվեց 2-րդ շրջանը: 6-րդ տուրի 3 պարտիաներից արդյունավետ ելք ունեցավ միայն Վան Յուեի եւ Վիշվանաթան Անանդի մրցավեճը, որն ավարտվեց աշխարհի չեմպիոնի հաղթանակով: Բաֆրո-Կառլսեն, Հաշիմով-Թոփալով պարտիաներն ավարտվեցին ոչ-ոքի:

6 տուրից հետո միանձնյա առաջատարը Մագնուս Կառլսենն է, որն ունի 4,5 միավոր: 4 միավորով 2-րդ տեղում Բաֆրոն է: Անանդի հաշվին գրանցված է 3,5 միավոր: Հաջորդ տեղերում են Հաշիմովը՝ 2,5, Թոփալովը՝ 2, Վան Յուեն՝ 1,5:

56-ամյա Պուդիշեւը մասնակցեց առաջնության խաղին

Բրեստի «Դինամոյի» 56-ամյա մարզիչ, նախկինում հայտնի ֆուտբոլիստ Յուրի Պուդիշեւը ԲԱՏԷ-ի հետ առաջնության հանդիպման 90-րդ րոպեին փոխարինման մտնելով, դարձավ Բելառուսի առաջնությունների ամենատարեց մասնակիցը: Այդ օրը նա 56 տարեկան 205 օրական էր:

56 համարի մարզաշապիկով վեստերանը խաղի ընթացքում մի քանի անգամ դիպավ գնդակին, նույնիսկ մասնակցեց «Դինամոյի» գրոհին: Նա խաղադաշտ դուրս եկավ այն ժամանակ, երբ թիմը պարտվում էր 0-2 հաշվով:

«Դինամոյի» գլխավոր մարզիչ Յուրի Պունտուսի կարծիքով, այդ քայլը հարգանքի տուրք էր Պուդիշեւի հանդեպ եւ հնարավորություն՝ ընդգրկվելու Գինեսի ռեկորդների գրքում: Նա հույս է հայտնել, որ Պուդիշեւի նվաճումը կարժանանա Գինեսի գրքի ներկայացուցիչների ուշադրությանը:

Էջը պատրաստեց **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

ԱԶԳ **Օրվա հետքերով**

Թեհրանը մտահոգված է ԼՂ հակամարտության կարգավորման աշխատանքների ընթացքից

Թեհրանում՝ մամուլի եւ լրատվական գործակալությունների 17-րդ միջազգային ցուցահանդեսի շրջանակներում, միջոցառման մասնակից լրագրողների հետ հանդիպեց ԻԻՀ արտաքին գործերի նախարար **Մանուչեհր Մոթթաքին:**

Հանդիպման հիմնական թեման հարեւան պետությունների հետ ԻԻՀ արտաքին հարաբերությունների զարգացումն ու ամրապնդումն էր: Անդրադառնալով աֆղանական խնդրին եւ իրանա-աֆղանական հարաբերություններին՝ Մոթթաքին նշեց, որ Աֆղանստանի հետ հարաբերությունները եղել եւ շարունակում են մնալ բարձր մակարդակի վրա: Երկու երկրների հարաբերությունները, Մոթթաքիի հավաստմամբ, բարեկամական են՝ հիմնված միանման մշակույթի, քաղաքական հայացքների եւ հետաքրքրությունների վրա: Նա ընդգծեց, որ տարբեր ոլորտներում շարունակվելու է սերտ համագործակցությունը Աֆղանստանի հետ, ինչ վերաբերում է Աֆղանստանում «օտարերկրացիների» ներկայությանը, Իրանի արտաքին գերատեսչության ղեկավարը խորհուրդ տվեց անհապաղ լքել տարածքն ու չմիջամտել երկրի գործերին:

Շարունակում են լարված հարաբերությունները իրանա-բրիտանական հարաբերություններում: «Եթե Մեծ Բրիտանիան շարունակի պատժամիջոցներ կիրառել ընդդեմ Իրանի, ապա հարաբերությունները երկու երկրների միջեւ կբարդանան», ասաց Մոթթաքին՝ հավելելով, որ ներկա դրությամբ Իրանի քաղաքացիներին գրեթե միշտ մերժում են տրամադրել անցագրային ռեժիմ Մեծ Բրիտանիա այցելելու համար: «Սակայն բրիտանական կողմի այս վարմունքը որեւէ առնչություն չունի երկու երկրների միջեւ ծագած անհամաձայնություններին», ասաց նա:

«**Ազգ**» օրաթերթի հարցին ի պատասխան՝ Մոթթաքին պատմական եւ արժեքավոր գնահատեց հայ-իրանական հարաբերությունների ներկա փուլը՝ հավելելով, որ այսօր դրանք ընթանում են երկկողմ հետաքրքրությունների շրջանակում: Նրա մեկնաբանությամբ՝ վերջին տարիներին Հայաստանի եւ Իրանի միջեւ հարաբերությունները զարգացել են՝ աստիճանվելով բարձր մակարդակ: Այդ հարաբերությունները հիմնականում ծավալվում են տնտեսական, քաղաքական եւ մշակութային ոլորտներում: «Հայ-իրանական հարաբերությունների ամրապնդումը ապացուցող ամենաթարմ փաստը Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսյանի գլխավորած պատվիրակության երկօրյա պաշտոնական այցն էր Իրան: Վարչապետի գլխավորած պատվիրակության կազմում էին բազմաթիվ նախարարներ, որոնք հանդիպումներ են ունեցել իրանցի գործընկերների հետ ու կնքել բազմաթիվ կարեւոր պայմանագրեր: Վարչապետ Սարգսյանի՝ Թեհրանում կայացած հանդիպումների ժամանակ իրանական կողմն իր մտահոգությունն է արտահայտել Ղարաբաղյան խնդրի կարգավորման շուրջ ընթացող աշխատանքների վերաբերյալ եւ հերթական անգամ ներկայացրել իր առաջարկությունը՝ հանդիսանալ միջնորդ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ՝ հակամարտությունը խաղաղ կարգավորման եւ բանակցային սեղանի շուրջը լուծելու համար», ասաց Մոթթաքին:

ՀԱՄԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Թեհրան

Թեհրանում հայկական պատվիրակությունը վերջնաժամկետ է ներկայացրել իրանական կողմին

1-ին էջից

Երեկ առավոտյան հայկական տաղավար այցելեց Իրանում Հայաստանի դեսպան Գրիգոր Առաքելյանը: Դեսպանն ու հայ լրագրողները եւս մեկ անգամ ցուցահանդեսի կազմակերպիչներին ներկայացրին միջադեպը: Հայաստանի դեսպանը զրույցի ընթացքում կազմակերպիչներին բացատրեց խնդրի էությունը՝ փաստելով, որ հուշարձանը հայկական է, հեղինակը՝ հայ, եւ այն պետք է ներկայացվի հայկական տաղավարում որպես երկրի ազգային խորհրդանիշ: Այնուհետեւ ադրբեջանական տաղավար այցելեց ԻԻՀ-ում Ադրբեջանի դեսպանը եւ զրուցեց կազմակերպիչների հետ:

ՀՀ դեսպանը (աջից) բացատրություն է պահանջում ցուցահանդեսի կազմակերպիչներից:

Ավելի ուշ հայկական կողմը կազմակերպիչներին հայտարարեց, որ լուսանկարի տեղադրումն իրենց համար պատվի հարց է, եւ նրա հանումը վիրավորական է Հայաստանի եւ հայ ժողովրդի համար: Եթե մինչեւ առավոտյան լուսանկարը տաղավարի պատին չտեղադրվի, ապա հայկական կողմը, ի տարբերություն ադրբեջանականի, կդիմի ամենաքաղաքակիրթ տարբերակին եւ կհրաժարվի մասնակցել ցուցահանդեսին: Այդ կապակցությամբ հայկական կողմը ծավալուն հարցազրույց է տվել իրանական երիտասարդական ռադիոյին:

Եթե Ազգային հետախուզական կազմակերպությունը՝ MIT-ն է սպառնացել Հրանտ Դինքին, ապա սպանության գործը չի բացահայտվի երբեք

1-ին էջից

Փոխնահանգապետից հետո, ինչպես սպանությունից մի քանի օր առաջ, 2007-ի հունվարի 12-ին «Ակօսում» անձամբ վկայել էր Դինքը, խոսակցությանը միջամտել է հանդիպմանը ներկա տղամարդը, մյուսը կին էր: Նա փորձել է համոզել մեր հանգուցյալ հայրենակցին լինել զգուշավոր, խուսափել երկրում եւ հասարակությունում լարվածություն առաջացնող ձեռնարկումներից, ավելացնելով. «Որքան էլ հավանություն չտանք Ձեր գրածներին, այնուամենայնիվ գիտենք, որ Դուք վաս նպատակ չեք հետապնդում: Սակայն այսպես կարող են ոչ բոլորը մտածել, եւ Դուք հակազդեցություն առաջ կբերեք երկրում»:

Ակամա հարց է ծագում. ի՞նչ առնչություն ունի Ազգային հետախուզական կազմակերպության դատական նիստին ուղղված պաշտոնական գրությունը Ստամբուլի փոխնահանգապետի հետ Հրանտ Դինքի զրույցին: Այն, որ հանդիպման երկու մասնակիցները եղել են MIT-ի կադրային գործակալներ, եւ Ստամբուլի նահանգապետարանում Դինքը սպառնալիքի թիրախ է դարձել հենց նրանց նախաձեռնությամբ, Աթաթուրքի հոգեւոր հոգեդստեր ծագումը փորփրելու համար:

MIT-ի պաշտոնական գրության մեջ նշված է. «Հրանտ Դինքը Ստամբուլի նահանգապետարան է հրավիրվել մեր գիտությամբ, այնտեղ նրան զգուշացրել էին, որ Սաբիհա Գյոքչենի մասին գրածներով կարող է հասարակական գրգռվածություն առաջացնել»: «Թարաֆն» այս գրությունը որակում է «խոստովանություն»: Մենք էլ մեր կողմից ավելացնենք, որ Սաբիհա Գյոքչենը, լինելով Աթաթուրքի հոգեդուստրը, միաժամանակ խորհրդանշում էր ժամանակակից թուրք կնոջը:

YOUTUBE

Բայդենն ասե՞լ է, թե՞ չի ասել. Հայաստանի նախագահի գրասենյակից հերքում են

1-ին էջից

Այլապես սա խնդիր է դառնում պետության համար՝ պետության եւ նրա նախագահի արժանապատվության հարց է նախ, հետո կապված է սերմանվում հասարակության մեջ, որ Սերժ Սարգսյանը հրապարակորեն խոսում է «Ե՞րբ պիտի լինի հայկական Նյուրնբերգը» եւ դրան նման պոստուլատներով, իսկ զանգի միջոցով անում է հակառակը: Լավ կլինի պարզել նաեւ տեսանյութը ինտերնետում տեղադրողի ինքնությունը, քանի որ սա արդեն միայն անձերին չի ուղղված, ասացինք արդեն՝ այլ հայկական պետության արժանապատվությանը:

Երեկ՝ օրվա երկրորդ կեսին Հայաստանի նախագահի մամուլի խոսնակ Արմեն Արզումանյանը հերքեց տեսանյութում ասվածը. «Հայաստանի Հանրապետության նախագահը երբեւէ չի զանգահարել ԱՄՆ փոխնախագահ Ջո Բայդենին: Վերջինիս նախաձեռնությամբ 2009-ին կայացել է երկու հեռախոսազրույց, որոնց ընթացքում Հայաստանի Հանրապետության նախագահը չի արել տեսանյութում իրեն վերագրվող արտահայտությունն ուղղակի կամ անուղղակի: Հակառակը՝ բոլոր հանրային ելույթներում եւ պաշտոնական հանդիպումների ընթացքում ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը կարեւորել է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումն ու դատապարտումը եւ կոչ է արել չարդարացնել ճանաչման ձգձգումը Թուրքիայի հետ ընթացող բանակցություններով: Վստահ լինելով, որ Սոֆիտակ տունն իր տրամադրության տակ ունի ԱՄՆ-ի փոխնախագահի բոլոր պաշտոնական հեռախոսազրույցների սղագրություններն ու ձայնագրությունները՝ ՀՀ նախագահի աշխատակազմը պաշտոնապես տալիս է իր համաձայնությունը՝ հրապարակելու նշված հեռախոսազրույցի ձայնագրությունը»:

Առավել եւս՝ մեր ասած պարզումները եւ պարզաբանումները մնում են հրապարակ:

Մ. Խ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի նոյեմբերի 14-ին Առնո Բաբաջանյանի անվան փոքր դահլիճում (Աբովյան փող. 2) տեղի կունենա **«Չիլինգարյան (Մամիկոնյան) տոհմ»** պատմաազգագրական ՀԿ-ի հիմնադիր ժողովը: Տեղեկությունների համար զանգահարել՝ հեռ. 52-42-38, 098 77-11-00, 091 77-12-00:

Նախագահ՝ Մ. Չիլինգարյան

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՃԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն, մշակվում է ՀՀ Կոտայքի մարզի Աղավնաձոր համայնքի վարչական տարածքում գործող **«Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ» Աղավնաձորի** ուսումնական բազային խմելու-կենցաղային նպատակով համայնքի տարածքում գտնվող անանուն աղբյուրից 1,2 լ/վրկ ջրառի նոր ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ բնապահպանության նախարարություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2010 թ. նոյեմբերի 2-ին, ժամը 16-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ բնապահպանության նախարարություն

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՃԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն, մշակվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Լճավան համայնքում Ծովակ գյուղի ներտնտեսական ոռոգման ջրագծի դյուկերի վրա՝ **«Արմարսոն-Էներջի» ՍՊԸ-ի** կողմից «Ծովակ» ՓՀԷԿ-ի կառուցման համար (ոչ ոռոգման սեզոնին)՝ Լճավանի բնական աղբյուրներից նոր ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2010 թ. նոյեմբերի 2-ին, ժամը 16.00-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

www. azg.am

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, սնորագրուած է տպագրութեան՝ 27.10.2010, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տաղան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: